ԳԼՈԲՈՒՍ

Հրատարակվում է
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ աջակցությամբ

9 (88)

ԵՐԵՎԱՆ

2017

ԳԼՈԲՈՒՍ

Թիվ 9 (88), 2017

«ԳԼՈԲՈՒՍ» ՏԵՂԵԿԱԳՐԻ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Աշոտ Թավադյան
ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր

Աշոտ Թևիկյան
ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների և Ռուս-հայկական (սլավոնական) համալսարանի կառավարման ամբիոնների դասախոս, տ.գ.թ.

Գագիկ Հարությունյան (համակարգող)
«Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն, ք.գ.թ.

Կարեն Վ.Կարապետյան
ՀՀ վարչապետ, տնտեսագիտության դոկտոր

Մուշեղ Լալայան
ՀՀԿ փոխնախագահ

Սամվել Մանուկյան
«Նորավանք» ԳԿՀ փոխտնօրեն, ս.գ.թ.

Վահագն Ագլյան
«Նորավանք» ԳԿՀ խորհրդական, ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի Հանրային կառավարման ամբիոնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ

Վարդան Հարությունյան
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահ, տ.գ.թ.

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր
Գագիկ Հարությունյան

Գլխավոր խմբագրի տեղակալներ
Սամվել Մանուկյան
Վահագն Ագլյան

Պատասխանատու խմբագիր
Խոնարհիկ Քարաուղլանյան

Պատասխանատու քարտուղար
Լուսինե Բաղրամյան

Խմբագիրներ
Արեստակես Սիմավորյան
Դիանա Գալստյան
Կարեն Վերանյան
Վահրամ Հովյան

Էջադրող-ձևավորող
Տաթևիկ Քարաուղլանյան

ԳԼՈԲՈՒՍ

Թիվ 9 (88), 2017

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Տաթևիկ Քարառուղլանյան
Տարածաշրջանի համալսարանները 2018թ. վարկանիշային աղյուսակներում 5

Սամվել Մարտիրոսյան
Համացանցի և բջջային կապի ներթափանցումը,
սոցիալական մեդիաները Հայաստանում (2017թ.) 10

Սամվել Մանուկյան, Դիանա Գալստյան
Ինչ են մատուցում լսարանին Հայաստանի հեռուստաալիքները 14

Հայկ Գաբրիելյան
Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթգծի բացման շուրջ 27

Արմեն Մանվելյան
Էներգետիկ կառույցները միջազգային հարաբերություններում 38

Գեորգի Կոլարով
«Ադրբեջանական լվացքատունը» և բուլղարական ավանդական
ձախ կուսակցության քաղաքական մահը 44

Արտյոմ Տեր-Հարությունյան
Ահաբեկչության դեմ պայքարում պրոֆիլակտիկ-կանխարգելիչ
գործունեության իրավական կարգավորումը 51

Հուշագիր հեղինակին 59

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐԸ 2018Թ. ՎԱՐԿԱՆԻՇԱՅԻՆ ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐՈՒՄ

Տաթևիկ Քարաուղլանյան*

Բրիտանական *Quacquarelli Symonds* և *Times Higher Education* վարկանիշային կազմակերպությունները հրապարակել են աշխարհի տարբեր երկրների բուհական հաստատությունների վարկանիշավորման 2018թ. աղյուսակները, որոնք ներկայացվում են ստորև։

1. Quacquarelli Symonds կազմակերպությունը հրապարակել է «զարգացող» Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի *QS EECA University Rankings (Quacquarelli Symonds Emerging Europe and Central Asia University Rankings)* 2018թ. վարկանիշային աղյուսակը, որը ներառում է տարածաշրջանի 300 լավագույն բուհերը։

Quacquarelli Symonds-ը համալսարանների վարկանիշավորման ազդեցիկ համակարգ է, հիմնադրվել է 2004թ. բրիտանական *Times Higher Education* պարբերականի հետ համատեղ։ Այդ համագործակցությունը 2010թ. դադարել է, և *Quacquarelli Symonds*-ը սկսել է հրատարակել սեփական հետազոտությունների շարքը։

Վարկանիշավորման համակարգն օգտագործում է *QS World University Rankings* համաշխարհային ինդեքսից փոխ առած գնահատման մեթոդաբանություն։ Ընդհանուր առմամբ՝ գնահատվում է 8 գործոն, ներառյալ համալսարանի առցանց ներկայությունը և գիտական կոչում ունեցող դասախոսական կազմի համամասնությունը։ Բացի կրթական բաղադրիչից, գնահատվում են նաև տվյալ համալսարանի շրջանավարտների մասնագիտական որակն ու մրցունակության մակարդակը համաշխարհային աշխատաշուկայում, որը կատարում են շրջանավարտներին գործի ընդունող կազմակերպությունները։ Հաշվի են առնվում նաև ուսանող-դասախոս հա-

---

* «Նորավանք» ԳԿՀ Ուսումնական կենտրոնի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար։

բաբերակցությունը, հետազոտական աշխատանքներն ըստ ֆակուլտետների (ինստիտուտների), ինչպես նաև աշխատությունների ազդեցության գործոնն ու մեջբերումների միջին քանակը: Ստորև ներկայացնում ենք չափորոշիչներն ըստ տոկոսների[1].

- Ակադեմիական հեղինակությունը (30%)
- Գործատուի հեղինակությունը (20%)
- Ֆակուլտետ / ուսանող հարաբերակցությունը (15%)
- Հետազոտական աշխատանքներն ըստ ֆակուլտետների (10%)
- Վեբ ազդեցությունը (10%)
- Գիտական կոչում ունեցող աշխատակիցների քանակը (5%)
- Հղումների քանակը (5%)
- Միջազգային ֆակուլտետների (2,5%) և միջազգային ուսանողների քանակը (2,5%):

QS EECA University Rankings 2018թ. վարկանիշավորմամբ լավագույն բուհեր են ճանաչվել Մոսկվայի Մ.Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանը, Նովոսիբիրսկի պետական համալսարանը, Տարտուի համալսարանը: Առաջին տասնյակում տեղ է զբաղեցրել թուրքական երկու բուհ՝ Բողազիչի համալսարանը և Միջին Արևելքի տեխնիկական համալսարանը: Ընդհանուր առմամբ, աղյուսակում ընդգրկված է թուրքական 53 բուհ, որոնցից 13-ը՝ առաջին հարյուրյակում (տե՛ս *Աղյուսակ 1*).

Հայաստանյան բուհերից ցուցակում ընդգրկվել են Երևանի պետական համալսարանը (181-190 դիրք) և Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարանը (201-250 դիրք): Համեմատության համար նշենք, որ աղյուսակում կա ադրբեջանական 6 և վրացական 1 բուհ (տե՛ս *Աղյուսակ 2*).

[1] https://www.topuniversities.com/university-rankings/eeca-rankings/2018

Աղյուսակ 1

Թուրքական բուհերը QS EECA University Rankings 2018թ. վարկանիշավորման աղյուսակում

Դիրք	Բուհի անվանումը
7	Բողազիչի համալսարան
9	Միջին Արևելքի տեխնիկական համալսարան
12	Բիլքենթ համալսարան
14	Քոչ համալսարան
16	Սաբանջը համալսարան
26	Ստամբուլի տեխնիկական համալսարան
31	Ստամբուլի համալսարան
38	Հաչեթեփե համալսարան
61	Անկարա համալսարան
80	Էգե համալսարան
82	Իզմիրի տեխնոլոգիական ինստիտուտ
85	Գազի համալսարան
97	«Դոքուզ Էյլուլ» համալսարան

Աղբյուրը՝ https://www.topuniversities.com/university-rankings/eeca-rankings/2018

Աղյուսակ 2

Հայաստանյան բուհերի զբաղեցրած դիրքերը տարածաշրջանի այլ բուհերի շարքում

Դիրք	Բուհի անվանումը	Երկիրը
95	Բաքվի պետական համալսարան	Ադրբեջան
100	Խազար համալսարան	Ադրբեջան
161-170	Ադրբեջանի պետական տնտեսագիտական համալսարան	Ադրբեջան
171-180	Ադրբեջանի ճարտարապետական և շինարարական համալսարան	Ադրբեջան
171-180	Ադրբեջանի լեզվաբանական համալսարան	Ադրբեջան
181-190	Երևանի պետական համալսարան	Հայաստան
201-250	Բաքվի Սլավոնական համալսարան	Ադրբեջան
201-250	Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարան	Հայաստան
251-300	Վրաստանի տեխնիկական համալսարան	Վրաստան

Աղբյուրը՝ https://www.topuniversities.com/university-rankings/eeca-rankings/2018

2. Times Higher Education պարբերականը հետազոտություններ է իրականացնում լրատվության և բարձրագույն կրթության ոլորտում: 2010թ., դադարեցնելով համագործակցությունը *Quacquarelli Symonds*-ի հետ, պարբերականը տվյալների ապահովման վերաբերյալ պայմանագիր ստորագրեց *Thomson Reuters* միջազգային մեդիա-կորպորացիայի հետ:

Ամենամյա հետազոտության արդյունքներով՝ կազմվում է աշխարհի լավագույն համալսարանների ազատ վարկանիշավորման աղյուսակը: Աղյուսակում չեն ընդգրկվում այն համալսարանները, որոնք զբաղվում են միայն հատուկ ոլորտի հետազոտություններով և թողարկում են 200-ից պակաս գիտական հրապարակումներ: Նախագծի հեղինակները նշում են, որ *Times Higher Education*-ի հետազոտական թիմն աշխատում է հնարավորինս օբյեկտիվ, բոլոր տվյալները, մեթոդաբանությունը բաց են և հասանելի բոլորին: Վարկանիշավորման հաշվարկը ստուգվում է *PricewaterhouseCoopers (PwC)* միջազգային աուդիտորական ընկերության կողմից:

Ըստ 2018թ. տվյալների՝ լավագույն տասնյակում բրիտանական և ամերիկյան համալսարաններն են: Որպես կարևոր միտում նկատվում է չինական համալսարանների շարունակական առաջընթացը: Լավագույն 30 համալսարանների ցանկում են հայտնվել Պեկինի (27-րդ դիրք) և Սինհուայի (30-րդ դիրք) համալսարանները[2]: Նշվում է նաև, որ չինական բոլոր համալսարաններն են բարելավել դիրքերը նախորդ տարիների համեմատ:

Մոսկվայի Մ.Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանը նախորդ տարվա համեմատ նահանջել է 6 հորիզոնականով՝ զբաղեցնելով 194-րդ տեղը: Ընդհանուր առմամբ՝ ցանկում ընդգրկված է ռուսական 27 համալսարան: Մեր տարածաշրջանից ցանկում կա թուրքական 22 և վրացական 1 համալսարան (տե՛ս *Աղյուսակ 3*): Հայկական և ադրբեջանական և ոչ մի համալսարան այս տարի ևս ցուցակում ընդգրկված չէ[3]:

[2] https://www.timeshighereducation.com/news/world-university-rankings-2018-results-announced

[3] https://www.timeshighereducation.com/world-university-rankings/2018/world-ranking#!/page/0/length/-1/sort_by/rank/sort_order/asc/cols/stats

Աղյուսակ 3

Աշխարհի բուհերի լավագույն տասնյակը
և մեր տարածաշրջանի լավագույն բուհերը

Դիրք	Բուհի անվանումը	Երկիրը
1	Օքսֆորդի համալսարան	Մեծ Բրիտանիա
2	Քեմբրիջի համալսարան	Մեծ Բրիտանիա
=3	Կալիֆորնիայի տեխնոլոգիական ինստիտուտ	ԱՄՆ
=3	Սթենֆորդի համալսարան	ԱՄՆ
5	Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտ	ԱՄՆ
6	Հարվարդի համալսարան	ԱՄՆ
7	Փրինսթոնի համալսարան	ԱՄՆ
8	Լոնդոնի Իմպերիալ քոլեջ	Մեծ Բրիտանիա
9	Չիկագոյի համալսարան	ԱՄՆ
=10	Ցյուրիխի բարձրագույն տեխնիկական դպրոց	Շվեյցարիա
=10	Փենսիլվանիայի համալսարան	ԱՄՆ
194	Մոսկվայի Մ.Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարան	Ռուսաստան
301-350	Քոչ համալսարան	Թուրքիա
1001+	Թբիլիսիի Ի.Ջավախիշվիլու անվան պետական համալսարան	Վրաստան

Աղբյուրը՝ https://www.timeshighereducation.com/world-university-rankings/2018/world-ranking#!/page/0/length/-1/sort_by/rank/sort_order/asc/cols/stats

Ամփոփելով՝ փաստենք, որ Հայաստանը, չնայած նախորդ տարիների համեմատ առաջընթաց է արձանագրել և դիրքեր է զբաղեցրել *QS EECA University Rankings* 2018թ. վարկանիշային համակարգում, բայց դեռ շատ անելիքներ ունի կրթության ոլորտում:

ՀԱՄԱՑԱՆՑԻ ԵՎ ԲՋՋԱՅԻՆ ԿԱՊԻ ՆԵՐԹԱՓԱՆՑՈՒՄԸ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԵԴԻԱՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (2017Թ.)

Սամվել Մարտիրոսյան[*]

Հայաստանում ինտերնետ կապի ներթափանցումը 2015 և 2016թթ. փոխվել է մոտ 10%-ով. համապատասխանաբար՝ բնակչության 55.29% և 64.2%-ն էր օգտվում ինտերնետ կապից[1]: 2017թ. ինտերնետ կապի օգտագործումն ինչ-որ չափով վերաբաշխվել է, նոր հարթակներ են առաջ անցել, ձևափոխվել են սոցիալական մեդիաների լսարանները:

Ստորև ներկայացնենք հիմնական ցուցանիշները, որոնք վերաբերում են 2017թ. կեսին, երկրորդ և երրորդ եռամսյակին՝ համեմատելով նախորդ ցուցանիշների հետ: ՏՀՏ տվյալները վերցված են կազմակերպությունների պաշտոնական հաշվետվություններից, որոնք հրապարակվում են եռամսյակը մեկ և տեղադրվում կազմակերպությունների կայքերում: (Տվյալները *2017թ. երկրորդ կիսամյակի վերաբերյալ են: Ամբ փակագծերում համեմատվում է 2017թ. առաջին եռամսյակի տվյալների հետ*[2]):

Բջջային կապի բաժանորդագրություններ

Բջջային կապի ընդհանուր բաժանորդների թիվը կազմել է **3 462 956** - աճը եռամսյակում կազմել է **61 537**:

Բաշխումն ըստ օպերատորների.

- *Vivacell* - **2 107 603 (+33 174)**
- *Beeline* - **913629 (+37 269)**
- *Ucom (former Orange)* - **441724 (-8 906)**

[*] «Նորավանք» ԳԿՀ Տեղեկատվական հետազոտությունների կենտրոնի փորձագետ:

[1] Ձևաչափ կապի և տեղեկատվական հեռահաղորդակցական տեխնոլոգիաների ոլորտի ցուցանիշների՝ ըստ հեռահաղորդակցության միջազգային միության (ՀՄՄ), http://mtcit.am/edfiles/files/Hashvetvutyunner/Havelvac1%202016.pdf

[2] Համացանցի և բջջային կապի ներթափանցումը Հայաստան. 2016 թվական, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=15955&sphrase_id=62912

Ինտերնետի սպառում

Տվյալներն ըստ խոշոր մատակարարների.

Armentel -

- Լայնաշերտ ինտերնետ հասանելիության բաժանորդներ (բացառությամբ հեռախոսի միջոցով օգտվողների) - **142 379** (*տվյալները 2016թ. չորրորդ եռամսյակի համեմատ)* **(-662)**
- Շարժական լայնաշերտ կապի բաժանորդագրություններ **62 231 (+3 649)**
- Տվյալների հաղորդման ծառայություններից օգտվող բաժանորդներ (հեռախոսի միջոցով) - **387 630 (+40 780)**

Vivacell -

- Լայնաշերտ ինտերնետ հասանելիության բաժանորդներ» (բացառությամբ հեռախոսի միջոցով օգտվողների) - **72,798 (- 1 725)**
- Տվյալների հաղորդման ծառայություններից օգտվող բաժանորդներ (հեռախոսի միջոցով) - **1 283 151 (+22 279)**

Ucom -

- Լայնաշերտ ինտերնետ հասանելիության բաժանորդներ (բացառությամբ հեռախոսի միջոցով օգտվողների) - **92 402 (+1 260)**
- Շարժական լայնաշերտ կապի բաժանորդագրություններ - **129 112 (+4 468)**
- Բջջային հեռախոսներով ինտերնետից օգտվողները - **205 298 (-66 675)**

Rostelecom -

- Լայնաշերտ ինտերնետի բաժանորդագրություններ - **42 210 (+1585)**

2017թ. առաջին եռամսյակի համեմատ, երբ ոլորտում նկատվում են տեմպերի աճի նվազում և նույնիսկ ցուցանիշների նահանջ, կարելի է տեսնել, որ հեռահաղորդակցության ոլորտը սկսել է ավելի աշխուժանալ:

Սոցիալական մեդիաների ոլորտում Հայաստանի ցանցային հատվածում նույնպես նկատվում են փոփոխություններ՝ նախորդ տարվա ցուցանիշների համեմատ: Հիմնական լուրջ փոփոխությունն է *Ինստագրամի* կտրուկ աճը:

Օդնոկլասնիկին կարծես թե նահանջում է, և արդեն կարելի է ասել՝ այն չի հանդիսանում Հայաստանի թիվ մեկ սոցիալական ցանցը: Ըստ *Liveinternet* տվյալների, *Օդնոկլասնիկի* այցելուների թիվը 2017թ. նվազել է, և հոկտեմբերին օրական կտրվածքով այցելուների թիվը հասել է 692 հազարի (տե՛ս *Նկար 1*).

Նկար 1

Օդնոկլասնիկի օրական այցելությունները 2015-2017թթ., ըստ Liveinternet-ի



2017թ. երրորդ եռամսյակում Ֆեյսբուքի այցելությունների թիվն ամսական կտրվածքով հասնում է արդեն 1 մլն 100 հազ.-ի, օրական կտրվածքով հարթակ այցելում է մոտ 690 հազար օգտատեր: Այսինքն՝ թիվը հավասարվել է *Օդնոկլասնիկի* այցելուներին, ինչը հիմնականում եղել է *Օդնոկլասնիկի* այցելուների թվի նվազման պատճառով, քանի որ *Ֆեյսբուքի* դեպքում մեկ տարվա մեջ լսարանի աճը կազմել է ընդամենը 10%:

Ըստ *Սիմիլարվեբի* գնահատականի՝ *Ֆեյսբուքի* այցելուներն արդեն գերազանցում են *Օդնոկլասնիկիին*[3]: Նաև առաջ է ընկել *Յութուբը*, որը դառնում է ակտիվ վիդեոբլոգերային հարթակ Հայաստանում, ինչը վերջին տարվա նորությունն է (տե՛ս *Նկար 2*).

[3] Top sites ranking for all categories in Armenia, October 2017, https://www.similarweb.com/top-websites/armenia

Նկար 2

Հայաստանից ամենաայցելվող կայքերն ըստ Similarweb.com-ի

Rank	Website
1	facebook.com
2	youtube.com
3	ok.ru
4	google.am
5	google.com
6	mail.ru
7	vk.com
8	yandex.ru
9	list.am
10	google.ru
11	instagram.com

Լսարանի լուրջ աճ է դիտվել *Ինստագրամում*: Այստեղ տվյալ պահին Հայաստանից ամսական կտրվածքով այցելուների թիվը հասնում է 430 հազարի, իսկ օրական օգտատերերինը՝ 210 հազարի: Համեմատության համար նշենք, որ մեկ տարի առաջ տվյալ ցուցանիշները կազմում էին 200 հազար և 110 հազար՝ համապատասխանաբար: Այսինքն՝ *Ինստագրամում* մենք ունենք կրկնակիից ավելի աճ:

Թվիթեր և *Վկոնտակտե* հարթակների վերաբերյալ դժվար է գնահատականներ տալ: *Թվիթերն* առայսօր չի հաջողում վիճակագրություն տալ փոքր շուկաների վերաբերյալ: Իսկ *Վկոնտակտեն*, փաստացի, մեծամասնությունն օգտագործում է զուտ որպես երաժշտություն լսելու կամ ֆիլմեր դիտելու հարթակ: Հայաստանում այն չի դառնում սոցցանցային մեծ շփման տիրույթ:

ԻՆՉ ԵՆ ՄԱՏՈՒՑՈՒՄ ԼՍԱՐԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՌՈՒՍՏԱԼԻՔՆԵՐԸ

Սամվել Մանուկյան[*], *Դիանա Գալստյան*[**]

Խնդիրը. Հայաստանի ինֆորմացիոն դաշտը, մասնավորապես՝ հեռուստատեսությունն ու ինտերնետը, հզոր բազմաշերտ և բազմաբովանդակ ազդեցություն ունեն Հայաստանի հասարակության վրա: Այն լցնում է մարդկանց ազատ ժամանակը, ձևավորում նրանց տեղեկությունները, գիտելիքները, ճաշակը, դիրքորոշումները և, վերջին հաշվով, մարդու աշխարհայացքը: Ինֆորմացիոն դաշտի ազդեցությունը համապարփակ է, անընդհատ և հարատև:

Ներկայում, երբ արդեն հանրահայտ է, որ ինֆորմացիոն դաշտի միջոցով, ինչպես երկրի ներսից, այնպես էլ դրսից, կառավարվում են հասարակությունները, հրահրվում են հասարակական հուզումներ և պատերազմներ, կարող են կոծկվել մարդկանց համար կարևոր գործընթացներն ու իրադարձությունները, կարևոր է ունենալ Հայաստանի ինֆորմացիոն դաշտի հնարավորինս համապարփակ նկարագրությունը, ինչպես նաև Հայաստանի հասարակության վրա դրա ազդեցության բնույթի և բովանդակության հարացույցը:

Ակնհայտ է, որ ինֆորմացիոն դաշտի համապարփակ ուսումնասիրությունը լայնամասշտաբ է: Պարզ է, որ այն պետք է լինի համակարգային և անընդհատ: Մյուս կողմից, ներկա դինամիկ աշխարհում, հավանաբար, առավել դինամիկ օբյեկտը ինֆորմացիոն դաշտն է, որի հետևանքով դրա ուսումնասիրությունները սիստեմատիկ կերպով «հետ են մնալու» դրա փոփոխության տեմպից: Եվ այնուամենայնիվ, Հայաստանի ինֆորմացիոն դաշտի ուսումնասիրությունը հույժ անհրաժեշտ է:

---

[*] «Նորավանք» ԳԿՀ փոխտնօրեն, սոց.գ.թ.:

[**] «Նորավանք» ԳԿՀ Տեղեկատվական հետազոտությունների կենտրոնի ղեկավարի տեղակալ:

Ներկայացվող հոդվածում ներկայացված է ինֆորմացիոն դաշտի կարևոր ***բաղադրիչի՝ հեռուստատեսության հեռարձակման ծրագրերի նախնական վերլուծությունը: Հոդվածը նպատակ ունի ընթերցողին ընդհանուր պատկերացում տալ, թե ինչ է մատուցում Հայաստանի հեռուստատեսությունն իր լսարանին:***

Հայաստանի հեռուստալսարանի դինամիկան.- 2012-2016թթ. ընթացքում Հայաստանի ընդհանուր հեռուստալսարանը (այն մարդիկ, ովքեր ընդհանուր առմամբ դիտում են հեռուստացույց) դանդաղ, սակայն մոնոտոն կրճատվում է: Եթե 2012թ. հեռուստալսարանը կազմում էր Հայաստանի 18 և ավելի տարիքի բնակչության 97.4%-ը, ապա 2016թ. արդեն՝ 92.6% (*Գծապատկեր 1-Ա*): Ընդ որում, 2016թ. 18-29 տարեկանների խմբում հեռուստացույց ընդհանրապես չէր դիտում 13%-ը: Հեռուստալսարանն առավելապես կրճատվել է Երևանում, որտեղ 2016թ. այն կազմել է 18 և ավելի տարիքի բնակչության 89.3%-ը, այն դեպքում, երբ գյուղերում հեռուստալսարանը կազմել է գյուղական 18+ տարիքի բնակչության 96.4%-ը (*Գծապատկեր 1-Բ*):

Գծապատկեր 1

Հայաստանի հեռուստալսարանի դինամիկան 2012-2016թթ. և հեռուստալսարանը բնակավայրի տիպերում, 2016թ., % 18+ տարեկան բնակչությունից





Հայաստանի հեռուստալսարանի բաշխումն ըստ օրվա ժամերի.- Հայաստանում հեռուստալսարանի ծավալն ըստ օրվա ժամերի ներկայացված է *Գծապատկեր 2*-ում: Գծապատկերի բոլոր երեք հատվածների բաշխումների տեսքերը բացարձակապես նույնն են, տարբերվում են միայն տոկոսների բովանդակությունները: Ձախ կողմի գծապատկերում տրված է օրվա տվյալ ժամին հեռուստացույց դիտող անձանց տոկոսային քանակը Հայաստանի 18 և ավելի տարեկան բնակչությունից: Մեջտեղի գծապատկերում տոկոսները հաշվարկված են 18 և ավելի տարեկան հեռուստալսարանից (այն անձանցից, ովքեր ընդհանուր առմամբ դիտում են հեռուստացույց): Իսկ աջ գծապատկերում տոկոսները հաշվարկված են որպես տոկոս «պիկ ժամի» (այն ժամը, երբ հեռուստացույց դիտողների քանակն առավելագույնն է) 18+ տարեկան հեռուստալսարանից: Հայաստանում հեռուստադիտումների պիկ ժամը 21:00-ն է:

Գծապատկեր 2-ից երևում է, որ հեռուստացույց դիտողների քանակը կտրուկ աճում է ժամը 18:00-ից (այդ ժամին հեռուստացույցի մոտ է Հայաստանի 18+ հեռուստալսարանի 24%-ը), իր առավելագույնին է հասնում 21:00-ին (69%), աստիճանաբար նվազում է մինչև կեսգիշեր (00:00-ին հեռուստացույց է դիտում Հայաստանի 18+ ընդհանուր հեռուստալսարանի 22%-ը) և կտրուկ նվազում է ժամը 01:00-ից (14%): Հեռուստացույց դիտողների քանակը գործնականում հավասարվում է 0%-ի ժամը 05:00-ին և սկսում է աճել ժամը 06:00-ից (1%):

Հաշվարկները ցույց են տվել, որ 17:00-23:00 ժամանակահատվածում (անվանենք «***երեկոյան լսարան***») հեռուստացույց է դիտում Հայաստանի 18+ տարեկան ամբողջ հեռուստալսարանի 83.9%-ը (*Գծապատկեր 3*)[1]: Այդ լսարանն էապես գերազանցում է և՛ «***առավոտյան լսարանը***»՝ 06:00-10:00 ժամանակահատվածը, երբ հեռուստացույց է դիտում 18+ ամբողջ հեռուստալսարանի 21.0%-ը, և՛ «***ցերեկային լսարանը***՝» 11:00-17:00 ժամանակահատվածը (21.2%), և՛, առավել ևս, «***գիշերային լսարանը***՝» 23:00-05:00 ժամանակահատվածը (3.9%):

[1] Այդ տոկոսը նույնական չէ *Գծապատկեր 2*-ի համապատասխան ժամերի հեռուստալսարանների գումարին: Այն հաշվարկվում է՝ հաշվի առնելով յուրաքանչյուր հեռուստադիտողի հեռուստացույցին մոտենալու ժամանակը և տևողությունը: Ընդ որում, հաշվառվել է այն, որ նույն անձը հեռուստացույց կարող է դիտել մի քանի անգամ:

Գծապատկեր 2

Հեռուստադիտողների բաշխումներն ըստ օրվա ժամերի

Ժամ	Դիտում են հեռուստացույց, 18+ տարեկան բնակչություն		
	% 18+ տարեկան բնակչությունից	% բոլոր 18+ տարեկան հեռուստադիտողներից	% պիկ ժամին 18+ տարեկան դիտողների քանակից
6:00	1%	1%	1%
7:00	2%	2%	4%
8:00	4%	4%	6%
9:00	5%	6%	8%
10:00	5%	6%	8%
11:00	5%	6%	8%
12:00	5%	5%	8%
13:00	5%	5%	7%
14:00	5%	6%	8%
15:00	5%	6%	9%
16:00	6%	7%	10%
17:00	8%	9%	13%
18:00	21%	24%	35%
19:00	34%	39%	56%
20:00	52%	59%	86%
21:00	61%	69%	100%
22:00	59%	66%	97%
23:00	46%	52%	76%
0:00	20%	22%	32%
1:00	12%	14%	20%
2:00	5%	6%	8%
3:00	1%	2%	2%
4:00	1%	1%	1%
5:00	0%	0%	0%
	100%	100%	150%

Գծապատկեր 3

Հայաստանի հեռուստալսարանը, % 16+ բնակչությունից



Աղյուսակ 1-ում տրված է 18+ տարեկան առավոտյան, ցերեկային, երեկոյան, գիշերային և ամբողջ հեռուստալսարանների սեռատարիքային կազմը:

Աղյուսակ 1

Հեռուստադիտողների սեռատարիքային կազմն ըստ օրվա փուլերի

Տարիք	Հեռուստադիտումների ժամեր												Ամբողջ լսարանը		
	06:00-10:00			11:00-17:00			17:00-23:00			23:00-05:00					
	Իգ.	Ար.	Ընդ.	Իգ.	Ար.	Ընդ.	Իգ.	Ար.	Ընդ.	Իգ.	Ար.	Ընդ.	Իգ.	Ար.	Ընդ.
16-30	10.9%	3.4%	***14.3%***	13.7%	6.2%	***19.9%***	15.3%	11.4%	***26.7%***	11.1%	40.0%	***51.1%***	15.5%	12.7%	***28.1%***
31-45	14.7%	6.3%	***21.0%***	13.7%	6.2%	***19.9%***	16.9%	10.0%	***26.8%***	11.1%	11.1%	***22.2%***	16.1%	10.0%	***26.1%***
46-60	23.9%	9.7%	***33.6%***	20.3%	7.5%	***27.8%***	17.3%	12.2%	***29.5%***	13.3%	8.9%	***22.2%***	17.1%	11.4%	***28.5%***
60 +	18.9%	12.2%	***31.1%***	20.7%	11.6%	***32.4%***	10.0%	7.0%	***17.0%***	4.4%	0.0%	***4.4%***	10.1%	7.1%	***17.2%***
Ընդ.	***68.5%***	***31.5%***	***100.0%***	***68.5%***	***31.5%***	***100.0%***	***59.4%***	***40.6%***	***100.0%***	***40.0%***	***60.0%***	***100.0%***	***58.8%***	***41.2%***	***100.0%***

Ստուգելու համար՝ արդյո՞ք միմյանցից տարբերվում են ստացված հինգ հեռուստալսարանների սեռատարիքային կառուցվածքները, իրականացվել են վիճակագրական փորձարկումներ: Կիրառվել է χ^2 թեստը: Պարզվել է, որ երեկոյան և ամբողջ հեռուստալսարանների սեռատարիքային կազմերը 0.95 հավանականությամբ միմյանցից վիճակագրորեն չեն տարբերվում ($\chi^2 = 0.4680$):

Հետևաբար, հեռուստատեսության ազդեցության ուսումնասիրությունը 17:00-24:00 ժամանակահատվածում կարելի է համարել ադեկվատ հեռուստատեսության ազդեցության ընդհանուր գնահատման համար:

Այնուամենայնիվ, հեռուստատեսության ազդեցության համապարփակ ուսումնասիրության համար կարևոր է ուսումնասիրել նաև մնացած ժամերի հեռուստահաղորդումները, քանի որ կան **հեռուստադիտողների յուրահատուկ խմբեր**, որոնց վրա ազդեցության գնահատման համար «**փրայմ թայմ**» ժամանակահատվածը բավարար չէ և չի բացառվում, որ նաև ադեկվատ չէ: Օրինակ՝ մանկական և պատանեկան հեռուստալսարանները, որոնց ուսումնասիրությունում խնդրո առարկա է, թե երբ են մանուկները (մինչև 6 տարեկան), դեռահասները (7-13 տարեկան) և պատանիները (14-17 տարեկան) հեռուստացույց դիտում, ինչ է հեռարձակ-

վում այդ ժամանակահատվածում: Ինչո՞վ են բնութագրվում (բացի սեռից և տարիքից) առավոտյան, ցերեկային և գիշերային հեռուստալսարանները:

Հայաստանի առավել դիտվող հեռուստալիքները.- Ռեսուրսների սահմանափակության հետևանքով հետազոտվել են Հայաստանի երեք առավել դիտվող հեռուստալիքները՝ «Արմենիա», «Շանթ» և Հ1: Հարց է առաջանում՝ արդյո՞ք դա բավարար է աղեկվատ արդյունքներ ստանալու համար հայաստանյան ամբողջ հեռուստաեթերի վերաբերյալ: Ստորև ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ կիրառված մոտեցումն արդարացված է:

Հետազոտությունները ցույց են տվել, որ Հայաստանի 18+ հեռուստալսարանի 77.4%-ի համար «Արմենիա», «Շանթ» և Հ1 հեռուստալիքները 1-ին կամ 2-րդ առավել դիտվող ալիքներն են: Ընդ որում, 62.3%-ի համար 1-ին կամ 2-րդ առավել հաճախ դիտվող հեռուստալիքն է «Արմենիան», 58.3%-ի համար՝ «Շանթը», 18.7%-ի համար՝ Հ1-ը (*Գծապատկեր 4*): Չորրորդ տեղում ընթացող «Կենտրոն» հեռուստալիքը 1-ին կամ 2-րդն է հեռուստադիտողների 8.5%-ի համար:

Գծապատկեր 4

Հեռուստալիքը 1-ին կամ 2-րդ առավել հաճախ դիտվող նշած անձանց տոկոսը՝ հեռուստացույց դիտող անձանց քանակից, 2016



- **Հետևաբար, այդ երեք հեռուստաալիքների եթերի ծրագրերի ուսումնասիրությունն ադեկվատ պատկերացում կտա այն մասին, թե, ընդհանուր առմամբ, ինչ է մատուցում հայաստանյան հեռուստաեթերն իր լսարանին։**

Իհարկե, Հայաստանում կան հեռուստաալիքներ, որոնց հեռարձակման ցանցը և բովանդակությունն էապես տարբերվում են դիտարկվող երեք հեռուստաալիքներից, օրինակ՝ Ար, Հ3, «Շողակաթ», «Արմենիա»։ Սակայն, քանի որ դրանց լսարանները, «Արմենիայի» և «Շանթի» համեմատ, շատ փոքր են (*Գծապատկեր 4*), հետևաբար՝ փոքր է նաև դրանց ազդեցությունը Հայաստանի հասարակության աշխարհայացքի, ճաշակի և տրամադրությունների վրա։

Հայաստանի առավել դիտվող հեռուստաալիքների հեռարձակման ցանցերը.- Այսպիսով, քանի որ «Արմենիա», «Շանթ» և Հ1 հեռուստաալիքների «փրայմ թայմ» հեռարձակումները մեծապես պայմանավորում են, թե ինչ է ընդհանուր առմամբ մատուցվում Հայաստանի ընդհանուր հեռուստալսարանին, դիտարկենք այդ հեռուստաալիքների «փրայմ թայմ» ծրագրերը։

Աղյուսակ 2-ում ներկայացված են «Արմենիա», «Շանթ» և Հ1 հեռուստաալիքների հեռարձակումներն ըստ հեռուստահաղորդումների տիպերի ծավալների 2017թ. սեպտեմբերի 4-ից մինչև 10-ը ժամանակահատվածում՝ «փրայմ թայմ»՝ 18:00-24:00 միջակայքում։ Այսինքն՝ մեկ հեռուստաընկերության համար դա կազմում է 42 ժամ, երեք հեռուստաընկերությունները միասին՝ 126 ժամ։ Այդ ժամանակահատվածում սեպտեմբերի 4-ը երկուշաբթի էր, սեպտեմբերի 10-ը՝ կիրակի։

Հեռուստաալիքների հեռարձակման ցանցի ուսումնասիրությունը թույլ է տալիս որոշակի պատկերացում կազմել յուրաքանչյուր հեռուստաալիքի բովանդակության ձևավորման քաղաքականության մասին։

Աղյուսակ 2

«Արմենիա», «Շանթ» և Հ1 հեռուստաալիքների հեռարձակումներն ըստ հեռուստահաղորդումների տիպերի ծավալների 2017թ. սեպտեմբերի 4-ից մինչև 10-ը ժամանակահատվածում, 18:00-24:00 ժամանակահատվածում

Հաղորդման տիպ	Հեռուստաալիք			Ընդամենը
	Արմենիա	Հ1	Շանթ	
Սերիալ	64.5%	43.5%	81.3%	64.4%
Գ/Ֆ	0.0%	33.0%	0.7%	11.5%
Լուրեր	11.1%	5.5%	6.3%	7.2%
Ժամանցային	9.1%	1.8%	5.1%	5.0%
Հաղորդ	3.7%	4.7%	0.0%	2.5%
Լրատվական-վերլուծական	5.2%	1.7%	0.0%	1.8%
Ստուդիական	5.0%	0.1%	0.9%	1.6%
Քաղաքական/վերլուծական	1.5%	0.0%	2.7%	1.5%
Մշակութային/վերլուծական	0.0%	3.3%	0.0%	1.1%
Զինվորական	0.0%	1.2%	1.3%	0.9%
Ճանաչողական/մշակութային	0.0%	1.8%	0.5%	0.8%
Սպորտ	0.0%	1.8%	0.0%	0.6%
Բժշկական հաղորդում	0.0%	0.0%	1.2%	0.5%
Հասարակական/վերլուծական	0.0%	0.8%	0.0%	0.3%
Վ/Ֆ	0.0%	0.7%	0.0%	0.2%
Ընդամենը	**100.0%**	**100.0%**	**100.0%**	**100.0%**

Սերիալներ. Ինչպես երևում է աղյուսակից, դիտարկված հեռուստաալիքներում սերիալներին է տրամադրվում «փրայմ թայմի» ժամանակի զգալի մասը: Այս հոդվածում չենք անդրադառնում սերիալների բովանդակությանն ու հնարավոր ազդեցությանը՝ թողնելով դա հետագա հրապարակումներին, սակայն անհրաժեշտ ենք համարում առավել մանրամասն ներկայացնել սերիալներին վերաբերող որոշ տվյալներ: Այդ տվյալները ցույց են տալիս, որ.

- **Հայաստանի առավել դիտվող երեք հեռուստաալիքները՝ «Արմենիա», «Շանթ» և Հ1, դիտարկվող մեկ շաբաթվա «փրայմ թայմ» ժամանակահատվածի 64.4%-ում Հայաստանի հեռուստալսարանին են մատուցել սերիալներ**[2]:

[2] Բոլոր երեք հեռուստաալիքները պատրաստվում էին սեպտեմբերի վերջից անցնել հեռուստահաղորդումների նորացված ցանցի:

Ընդ որում, այդ տեսակետից առաջնությունը «Շանթ» հեռուստաընկերությանն է՝ այն սերիալներով է լցնում «փրայմ թայմի» 81.3%-ը կամ՝ յուրաքանչյուր հինգ ժամից չորսը: Երկրորդ տեղում է «Արմենիան», որը «փրայմ թայմի» 64.5%-ը կամ՝ երեք ժամից երկուսը տրամադրում է սերիալներին: Երրորդ տեղում է Հ1-ը, որը սերիալներին է տրամադրում «փրայմ թայմի» 43.5%-ը: Հարկ է նշել, որ Հ1-ը, բացի սերիալներից, դիտարկվող շաբաթվա «փրայմ թայմ» ընդհանուր ժամանակահատվածի մեկ երրորդը՝ 33.0%, տրամադրել է գեղարվեստական ֆիլմերին:

Հետազոտության շրջանակներում սերիալները պայմանականորեն դասակարգվել են չորս խմբում.

1. Հեռուստաալիքների կողմից նկարահանվող սերիալներ:
2. Հնդկական սերիալներ:
3. «Ժամանցային սերիալներ» կամ *սիթքոմներ*[3]: Դրանք տվյալ հեռուստաալիքի արտադրության հումորային ժանրի սերիալներ են, օրինակ՝ «Դոմինոն» և «Ֆուլ Հաուսը» «Արմենիա»-ի եթերում:
4. «Ֆիլմաշար սերիալներ», օրինակ՝ «Կյանքը շարունակվում է» ֆիլմաշարը, որը բաղկացած է իրար հետ սյուժետային կապ չունեցող սերիաներից:

Այդ դասակարգմամբ սերիալների հեռարձակումն ըստ հեռուստաալիքների տրված է *Աղյուսակ 3*-ում:

Աղյուսակ 3

«Արմենիա», «Շանթ», Հ1 հեռուստաալիքներով, 2017թ. սեպտեմբերի 4-10-ը, ժամը 18:00-24:00 ժամանակահատվածում ցուցադրված սերիալների տիպերի ժամանակային ծավալը

Սերիալի տիպ	Հեռուստաալիք			Ընդամենը
	Արմենիա	Հ1	Շանթ	
Հնդկական սերիալ	45.6%	0.0%	18.4%	20.7%
Սերիալ	11.5%	17.2%	13.3%	13.7%
Սերիալ/ժամանցային	43.0%	0.0%	68.3%	46.5%
Սերիալ/ֆիլմաշար	0.0%	82.8%	0.0%	19.0%
Ընդամենը	**100.0%**	**100.0%**	**100.0%**	**100.0%**

[3] Սիթքոմ (անգլ.՝ sitcom, բացվում է որպես՝ situation comedy - կատակերգություն ըստ իրավիճակի), հումորային ժանր հեռուստատեսությունում և ռադիոյում, որում գործողությունները տեղի են ունենում սահմանափակ քանակով վայրերում (օրինակ՝ բնակարան, աշխատավայր, դպրոց և այլն):

Դիտարկվող ժամանակահատվածում «ժամանցային սերիալներ» հեռարձակել են «Արմենիան» և «Շանթ»-ը: Իսկ «Ֆիլմաշար սերիալներ» հեռարձակել է միայն Հ1-ը: «Հնդկական սերիալները» կազմել են «Արմենիա»-ի սերիալային ժամանակի 45.6%-ը, իսկ «Շանթի»՝ 18.4%-ը:

Սերիալների հեռարձակման տիպիկ ցանցը նշված երեք ալիքից որևէ մեկով, 2017թ. սեպտեմբերի 6-ի օրինակով, տրված է *Աղյուսակ 4*-ում: Աղյուսակից երևում է, որ այդ օրվա ընթացքում «փրայմ թայմում» դիտարկվող երեք ալիքներից զոնե մեկով սերիալ է հեռարձակվել: Ընդ որում, «Արմենիան» այդ օրը «փրայմ թայմում» սերիալ է տեղադրել 6 անգամ, «Շանթը»՝ 5 անգամ, իսկ Հ1-ը՝ 4 անգամ:

Աղյուսակ 4

2017թ. սեպտեմբերի 6-ին «Արմենիա», «Շանթ» և Հ1 հեռուստաալիքներով 17:00-24:00 ընթացքում հեռարձակված սերիալների ժամային ծածկույթը

Հաղորդման սկիզբը, ժամ:րոպե	Արմենիա	Հ1	Շանթ
	9/6/2017	9/6/2017	9/6/2017
17:25		1	
17:50	1		
18:10		1	
18:20			1
18:50	1		
18:55		1	
20:20			1
21:00	1		
21:10			1
21:45	1		
22:25	1		
23:00			1
23:10	1		
23:40			1
23:45		1	
Ընդամենը	**6**	**4**	**5**

Լուրեր.- Եթե հաշվի չառնենք սերիալները և Հ1-ով հեռարձակվող գեղարվեստական ֆիլմերը, ապա դիտարկվող երեք հեռուստաընկերություններով «փրայմ թայմում» երկրորդ տեղում են լուրերը՝ 7.2%

(*Աղյուսակ 2*)։ «Փրայմ թայմում» լուրերի հեռարձակումն ամենամեծ ծավալն է գրավում «Արմենիայում»՝ 11.1%, իսկ «Շանթի» և Հ1-ի հեռարձակումներում, համապատասխանաբար՝ 6.3% և 5.5%։ Լուրերի հեռարձակման ցանցը ներկայացված է *Աղյուսակ 5*-ում։ Աղյուսակում հարկ է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ.

- **«Արմենիա», «Շանթ» և Հ1 հեռուստաալիքների լուրերի հեռարձակումները չեն վերածածկվում։**

«Շանթի» լուրերը հաղորդվում են ժամը 18:00-18:50 և 22:00-22:35 ժամանակահատվածներում, «Արմենիայինը»՝ 20:00-20:55, իսկ Հ1-ինը՝ 21:00-21:35 ժամանակահատվածում։ Օրվա «փրայմ թայմի» ընթացքում «Արմենիան» և «Շանթը» լուրեր են հեռարձակում 55 րոպե, իսկ Հ1-ը՝ 35 րոպե։ Այսինքն.

- **Հայաստանի հեռուստալսարանում լուրերը ձևավորում են Հայաստանի հեռուստալսարանի բացարձակ գերակշիռ մասի աշխարհի կերպարը։**

Աղյուսակ 5

Լուրերի հեռարձակման ժամերը և տևողությունը «Արմենիա», «Շանթ» և Հ1 հեռուստաալիքներով, 6 սեպտեմբերի, 2017թ.

Հաղորդման սկիզբը	**Արմենիա**	**Հ1**	**Շանթ**
Ժամ /Րոպե	**9/6/2017**	**9/6/2017**	**9/6/2017**
18:00			0:20
20:00	0:55		
21:00		0:35	
22:00			0:35
Ընդամենը	**0:55**	**0:35**	**0:55**

Հիմնական արդյունքներ.- Հայաստանի ընդհանուր հեռուստալսարանը, վերջին 6 տարիներին կրճատվելով, այնուամենայնիվ, Հայաստանի հասարակությունում դեռևս մնում է մարդկանց աշխարհի կերպարը, արժեհամակարգը և ճաշակը ձևավորող առավել հզոր ԶԼՄ-ն։ 2016թ. Հայաստանի հեռուստալսարանը կազմել է Հայաստանի 18+ տարեկան բնակչության 92.6%-ը։

Հայաստանում հեռուստադիտումների պիկ ժամը 21:00-ն է, երբ հեռուստացույցի առջև է Հայաստանի 18+ տարեկան բնակչության 61%-ը: Հայաստանում 17:00-23:00 ժամանակահատվածում այս կամ այն չափով հեռուստացույց է դիտում Հայաստանի 18+ տարեկան բնակչության 84%-ը: Այդ հեռուստալսարանի 59%-ը կանայք են, իսկ 41%-ը՝ տղամարդիկ:

Հայաստանում առավել դիտվող հեռուստաալիքները 2016թ. եղել են «Արմենիան» (որը 1-ին կամ 2-րդ առավել դիտվող հեռուստաալիքն էր 18+ ընդհանուր հեռուստալսարանի 62.3%-ի համար), «Շանթը» (58.3%) և Հ1-ը (18.7%): Այդ երեք ալիքները 1-ին կամ 2-րդ առավել դիտվողն են Հայաստանի 18+ տարեկան բնակչության 77.4%-ի համար:

Այդ հեռուստաալիքներով ընդհանուր առմամբ 18:00-24:00 ժամանակահատվածում հեռարձակվող հաղորդումների ընդհանուր ծավալում.

- **83.1%-ը կազմում են սերիալները, գեղարվեստական ֆիլմերը և լուրերը**, այդ թվում.

1. **Սերիալները՝ 64.4%-ը,**
2. **Գեղարվեստական ֆիլմերը՝ 11.5%-ը,**
3. **Լուրերը՝ 7.2%-ը:**

- Հասարակական վերլուծական հաղորդումների ժամանակային ծավալը «փրայմ թայմում» կազմել է 0.3%, քաղաքական վերլուծական հաղորդումներինը՝ 1.5%, մշակութային վերլուծական հաղորդումներինը՝ 1.1%, մշակութային ճանաչողական հաղորդումներինը՝ 0.8%: Այդ հաղորդումների ընդհանուր ծավալը կազմել է 5.5%:
- Համերգներին տրամադրված ժամանակի ընդհանուր ծավալը կազմել է 2.5%:

Եզրակացություններ. Հայաստանի հասարակությանը **գործնականում հասանելի** հեռուստահաղորդումները ժանրային տեսակետից խիստ սահմանափակ են: Ըստ էության, բացակայում են մշակութային, սոցիալական, գիտահանրամատչելի, կրթական և ճանաչողական հաղորդումները: Գործնականում բացակայում է դասական մշակույթը: Եթե այդպիսի հաղորդումներն առկա են այլ հեռուստաալիքներում կամ այլ

ժամերի, ապա դրանցից շատ քիչ օգուտ կա, եթե դրանց լսարանը՝ ցանկացած պատճառների (փոքր լսարան, անհարմար ժամ, հեռուստաալիքի բացակայությունը հանրամատչելի հեռարձակվող փաթեթում և այլն) համակցության հետևանքով, խիստ փոքր է։

Հայաստանի հեռուստալսարանում աշխարհի կերպարը կազմավորվում է հիմնականում երեք հեռուստաալիքների՝ «Արմենիա», «Շանթ» և Հ1 լուրերի բովանդակությամբ, իսկ աշխարհայացքը, մտածողության բովանդակությունը, կենսական տիպական իրավիճակները, դրանց գնահատականները, կյանքին վերաբերող արժեքները, նորմատիվային վարքը և գեղարվեստական ճաշակը՝ սերիալներով։

Հետևաբար, Հայաստանի հասարակության վրա հեռուստատեսության ազդեցության ուսումնասիրության տեսակետից առաջնահերթ է հեռուստատեսային սերիալների և հեռուստատեսային լուրերի կառուցվածքային և բովանդակային ուսումնասիրությունը։

ԲԱՔՈՒ-ԹԲԻԼԻՍԻ-ԿԱՐՍ ԵՐԿԱԹԳԾԻ ԲԱՑՄԱՆ ՇՈՒՐՋ

Հայկ Գաբրիելյան[*]

2017թ. հոկտեմբերի 30-ին Բաքվի նավահանգստում տեղի ունեցավ Բաքու-Թբիլիսի-Կարս (ԲԹԿ) երկաթգծի բացման արարողությունը, որին մասնակցեցին Թուրքիայի և Ադրբեջանի նախագահները, Վրաստանի, Ղազախստանի և Ուզբեկստանի վարչապետերը: Ի դեպ, նշենք, որ թուրքական զորքը 1920թ. հոկտեմբերի 30-ին գրավել է Կարսի բերդը: Նրանք ԲԹԿ-ի բացումը որակեցին պատմական իրադարձություն՝ նշելով, որ նախագիծը չափազանց կարևոր է տարածաշրջանի, Հարավային Կովկասի և Կենտրոնական Ասիայի համար, Եվրոպան և Ասիան միմյանց կապող կամուրջ է: Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը նախագիծը որակեց «տարածաշրջանի կայունության և անվտանգության երաշխիք»՝ հավելելով, որ Լոնդոնը ԲԹԿ-ի շնորհիվ երկաթուղային ճանապարհով կկապվի Չինաստանին. «Եթե Չինաստանից եվրոպական երկրներ (Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Գերմանիա և այլն) Հյուսիսային և Հարավային միջանցքներով, ներառյալ ծովային ուղին, բեռնափոխադրումներն իրականացվում են 45-62 օրում, ապա ԲԹԿ-ի դեպքում դա կկազմի 12-15 օր: Մյուս միջանցքների համեմատ՝ ԲԹԿ-ով բեռնափոխադրումների ժամկետը նվազում է 35-40 օրով, ինչը շահավետ կլինի բեռնափոխադրողների համար: Եվրոպայի և Ասիայի միջև տարեկան ապրանքաշրջանառության ծավալը կազմում է ավելի քան 240 մլն տ, և եթե հաջողվի դրա առնվազն 10%-ն ուղղել մեր երկրներով անցնող Կենտրոնական միջանցքով, ապա մենք հավելյալ կտեղափոխենք 24 մլն տ բեռ»[1]:

Նշենք, որ դա իսկապես պատկառելի ցուցանիշ կլինի ԲԹԿ-ի համար՝ հաշվի առնելով, որ ծրագրված է սկզբնական շրջանում ԲԹԿ-ով տարեկան փոխադրել 6.5 մլն, իսկ հետագայում՝ 17 մլն տ բեռ: Ուշագրավ է, որ

[*] Թուրքագետ, ՄԱՀՀԻ ասոցացված փորձագետ:

[1] Cumhurbaşkanı Erdoğan: Bu proje hepimizin ortak başarısıdır, NTV, 30.10.2017.

ԲԹԿ-ով առաջին բեռնափոխադրումն (600 տ ղազախական ցորեն) իրականացվեց դեպի միջերկրածովյան Մերսին նավահանգիստ և ոչ թե դեպի Թուրքիայի եվրոպական հատված, ապա՝ ԵՄ: Բաքվից ուղարկված գնացքը Կարս ժամանեց նոյեմբերի 3-ին (գնացքը կազմված էր 32 բեռնարկղից, որոնք լցված էին հացահատիկով)[2], իսկ Կարսից Մերսին 1258 կմ հեռավորությունը գնացքը հաղթահարեց 30 ժամում՝ նախատեսված ժամկետից 10 ժամ ավելի շուտ[3]: Սա նշանակում է, որ հետագայում Չինաստանը, Կենտրոնական Ասիայի երկրները հնարավորություն կունենան Թուրքիայի միջոցով երկաթուղային բեռնափոխադրումներ իրականացնել դեպի մերձավորարևելյան երկրներ: Դա համապատասխանում է Թուրքիայի առաջ քաշած «երեք ծովերի» նախագծի իրագործմանը. 2012թ. փետրվարի կեսին Թուրքիայի էկոնոմիկայի նախարար Զաֆեր Չաղլայանը Թբիլիսիում անցկացված «Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան» գործարար ֆորումի ժամանակ կարևորեց երեք երկրների միջև ազատ առևտրի իրականացումը, միացյալ առևտրի տիրույթի ստեղծումը՝ երեք երկրների կողմից այդ կերպ երեք ծովերը (Կասպից, Սև, Միջերկրական) միմյանց կապելու նախագծի իրագործման համար[4]:

Թուրքական կողմի մտահղացմամբ՝ Կարսը վերածվելու է համաշխարհային առևտրի կարևոր կենտրոններից մեկի[5]: Ներկայում Կարսում շարունակվում են լոգիստիկ կենտրոնի կառուցման աշխատանքները, որի տարածքը կազմելու է 300 հազ. մ²: 2017թ. օգոստոսի վերջին Թուրքիայի տրանսպորտի նախարար Ահմեթ Արսլանը հայտարարեց, որ Կարսում լոգիստիկ կենտրոնի կառուցման աշխատանքները մեկնարկել են 5 ամիս առաջ, և արդեն կատարվել է աշխատանքների 25%-ը. «Կարսի լոգիստիկ կենտրոնի կառուցման աշխատանքներն ավարտվելու են 2018թ. հոկտեմբերին: Ներկա դրությամբ կառուցման փուլում է գտնվում ևս 7 լոգիստիկ կենտրոն, որոնց ավարտից հետո Թուրքիայում լոգիստիկ կենտրոնների թիվը կհասցվի 21-ի: Այդպիսով Թուրքիայում լոգիստիկ

[2] Bakü-Tiflis-Kars Demiryolu'nda ilk tren Kars'a ulaştı, Vatan, 03.11.2017.
[3] Bakü-Tiflis-Kars Demiryolu'nda ilk tren Mersin'e hesaplanandan 10 saat erken ulaştı, Milliyet, 04.11.2017.
[4] Bakan Çağlayan."Üç Deniz Projesi Türkiye-Gürcistan-Azerbaycan Arasında Ortak Ticaret Alanı..., Haberler.com, 16.02.2012.
[5] Kars uluslararası ticaretin önemli üslerinden biri oldu, Yeni Akit, 09.11.2017.

կենտրոնների տարածքը կկազմի 10 մլն մ^2, իսկ երկաթուղային բեռնափոխադրումների հնարավորությունը կհասցվի 36 մլն տ»[6]:

Իսկ ինչո՞ւ ԲԹԿ բացումը հնարավոր դարձավ այս տարի, և 2017թ. չդարձավ նախագծի պատմության մեջ հերթական «վերջնաժամկետ», ինչպես որ դրա նախորդ տարիների դեպքում էր: Երկու տարի առաջ ԲԹԿ-ի մասին հրապարակած հոդվածում անդրադարձել էինք երկաթուղու թուրքական հատվածի ձգձգման պատճառներին, նշել, որ Թուրքիայում պարզապես չէր կայացվել քաղաքական որոշում՝ ԲԹԿ թուրքական հատվածի կառուցումն ավարտին հասցնելու համար, ենթադրել էինք, որ այդ ամենի պատճառը Թուրքիայի և Ադրբեջանի միջև առկա երկու կարևոր տարաձայնություններն էին: Խոսքը երկու երկրների միջև ազատ առևտրի համաձայնագիր ստորագրելու և վիզային ռեժիմի վերացման մասին էր, որոնք առնչվում էին (են) նաև երկաթուղային հաղորդակցությանը (ծրագրված է, որ ԲԹԿ-ն սկզբնական շրջանում պետք է փոխադրի տարեկան 1 մլն ուղևոր): Այդ համատեքստում հիշատակել էինք 2015թ. փետրվարին Թուրքիայի էկոնոմիկայի նախարար Նիհաթ Զեյբեքջիի այցն Ադրբեջան, ուր նա հայտարարել էր Թուրքիայի և Ադրբեջանի միջև ապրանքաշրջանառության ծավալը եռապատկելու ($5 մլրդ-ից մինչև $15 մլրդ-ի) անհրաժեշտության մասին և այդ համատեքստում կարևորել առևտրի ու վիզային ռեժիմի ազատականացումը: Առաջինն այն էր, որ Թուրքիան երկար ժամանակ ցանկանում էր ազատ կամ արտոնյալ առևտրի ռեժիմ ունենալ Ադրբեջանի հետ, ինչպես նաև ազատ առևտրի գոտի հիմնել Նախիջևանի ինքնավար հանրապետության (ՆԻՀ) հետ, սակայն Ադրբեջանը համառորեն ընդդիմանում էր դրան: Իսկ երկրորդ տարաձայնությունն այն էր, որ Թուրքիան, որը տարիներ առաջ վերացրել էր վիզային ռեժիմն Ադրբեջանի քաղաքացիների համար, պնդում էր, որ Ադրբեջանը կատարի համապատասխան քայլ, սակայն վերջինս ցայժմ հրաժարվում է վերացնել վիզային ռեժիմը Թուրքիայի քաղաքացիների համար: Երկու հարցում էլ Ադրբեջանի կողմից համառություն ցուցաբերելը հարուցում էր թուրքական կողմի զայրույթն ու ափսոսանքը, քանի որ խնդիրը նաև հոգեբանական նշանակություն ուներ (ունի) Թուրքիայի

[6] Kars Lojistik Merkezinin Yüzde 25'i Tamamlandı, Kars Manşet, 29.08.2017.

համար. նա հարևան Վրաստանի հետ ունի ազատ առևտրի և ոչ վիզային ռեժիմ, մինչդեռ «եղբայրական» Ադրբեջանը շարունակում էր (է) տվյալ հարցերում մերժել Թուրքիային: Ի պատասխան՝ Թուրքիան միտումնավոր ձգձգում էր ԲԹԿ իր հատվածի կառուցումը: 2015թ. դրությամբ արդեն պատրաստ էին երկաթուղու ամենաերկար՝ ադրբեջանական (504 կմ) և վրացական (259 կմ, որից 29 կմ-ը՝ նոր) հատվածները, սակայն ամենակարճ թուրքական հատվածը պատրաստ չէր: Թուրքիայից պահանջվում էր ԲԹԿ շրջանակներում իր տարածքում կառուցել 76 կմ նոր երկաթուղի, և այդ առումով թուրքական հատվածն ամենաերկարն էր (ԲԹԿ շրջանակներում նախատեսված էր կառուցել ընդհանուր 105 կմ նոր երկաթգիծ)[7]:

Փաստորեն, ԲԹԿ թուրքական հատվածի կառուցման համար պահանջվեց շուրջ 10 տարի (2009թ. դեկտեմբերին ԲԹԿ կառուցումը մի քանի ամսով դադարեցվեց՝ կապված Հայաստանի և Թուրքիայի միջև հարաբերությունների կարգավորման գործընթացի հետ): Հասկանալու համար, թե 76 կմ նոր երկաթգիծն ինչ թիվ է Թուրքիայի համար՝ նշենք, որ վերջին 15 տարում՝ «Արդարություն և զարգացում» կուսակցության (ԱԶԿ) կառավարման տարիներին, այդ երկրում մեծ ուշադրություն է հատկացվել երկաթուղային ցանցի զարգացմանը, և Թուրքիայում տարեկան կառուցվել է 138-158 կմ երկաթուղի, այդ թվում նաև բարդ ռելիեֆ ունեցող տեղանքում, ինչպես որ ԲԹԿ-ի պարագայում է[8]: Թուրքական կողմը նաև հայտարարում էր, թե խնդիրների է բախվել Վրաստանի հետ սահմանային թունել կառուցելիս, որի երկարությունը Վրաստանի տարածքում կազմում է 2070 մ, իսկ Թուրքիայի տարածքում՝ 2250 մ: Այս կապակցությամբ մեջբերենք 2017թ. հոկտեմբերի վերջին Թուրքիայի տրանսպորտի նախարար Ահմեթ Արսլանի արած հայտարարությունը, ըստ որի՝ միայն 1 տարում Թուրքիայում կառուցվել են 68 կմ ընդհանուր երկարությամբ թունելներ, մինչդեռ 80 տարում երկրում կառուցված թունելների երկարությունը կազմել է 50 կմ[9]: Այս ամենը վկայում է, որ իրականում Թուրքիայի համար շատ բարդ խնդիր չի եղել ԲԹԿ սեփական հատվածը կառուցելը:

[7] *Հայկ Գաբրիելյան*, Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթգծի շուրջ, «Նորավանք» ԳԿՀ, 02.11.2015:
[8] *Габриелян Айк*, О железной дороге Баку-Тбилиси-Карс, Институт Ближнего Востока, 14.11.2016.
[9] Реализация проекта БТК почти завершена, Anadolu Ajansı, 27.10.2017.

Հասկանալի է, որ ԲԹԿ բացումը պետք է տեղի ունենար մի օր՝ հաշվի առնելով թե՛ նախագծի կարևորությունը Թուրքիայի համար, թե՛ նախագծի շրջանակներում Թուրքիայի կատարած ծախսերը և այլն: Կարծում ենք, որ 2017թ. ԲԹԿ բացումը հնարավոր դարձավ Թուրքիայի վերոնշյալ առաջին պահանջի հարցում Ադրբեջանի արած լուրջ զիջումների շնորհիվ.

ա) Դեռևս 2017թ. հունիսին Նիհաթ Զեյբեքջին Կարսում հայտարարեց, որ Թուրքիան ազատ առևտրի գոտի է ստեղծում ՆԻՀ-ի հետ՝ հավելելով, որ արդեն ստեղծված է համապատասխան ենթակառուցվածք. «ՆԻՀ-ում արդեն տեղակայվել են Թուրքիայի էկոնոմիկայի նախարարության ներկայացուցիչները, ՆԻՀ-ի հետ առևտուրը կիրականացնեն Կարսի բնակիչները, և այն չի տարբերվի թուրքական մյուս քաղաքների (Էրզրում, Արդվին և այլն) հետ առևտրից: Սկզբնական շրջանում Կարսի և ՆԻՀ-ի միջև առևտրի ծավալը կազմելու է $100 մլն: Առևտուրը կիրականացվի թուրքական լիրայով: Մոտ ապագայում կակտիվանա սահմանային առևտուրը»[10]:

Նշենք, որ ՆԻՀ-ի հետ ազատ առևտրի գոտի հիմնելը բավական կարևոր է Թուրքիայի համար՝ այնտեղ սեփական ազդեցությունը մեծացնելու տեսանկյունից: Դեռևս 2010թ. հոկտեմբերին առաջին անգամ ՆԻՀ այցելած Թուրքիայի՝ արտաքին առևտրի հարցերով պետնախարար Զաֆեր Չաղլայանը հայտարարեց, որ իրենք պատրաստ են ՆԻՀ-ի հետ սահմանին ստեղծել ազատ առևտրի գոտի. «Մեր կառավարության արտաքին քաղաքականությունում հատուկ տեղ է տրվում ՆԻՀ-ին, ինչի համար էլ ես այստեղ եմ: Մեր նպատակը ՆԻՀ տնտեսությունում մեր ներդրումներն ու ՆԻՀ-ի հետ առևտուրը մեծացնելն է: Անհրաժեշտ է ավելի լավ գնահատել ՆԻՀ-ի հետ սահման ունենալու մեր առավելությունը: Որևէ խնդիր չկա ՆԻՀ-ի հետ սահմանին ազատ առևտրի գոտի հիմնելու համար: Թուրքիան 16 երկրի հետ ունի ազատ առևտրի համաձայնագիր: Մենք հետևում ենք մյուս երկրների առևտրային քայլերին և վարում ենք նաև «առևտրային դիվանագիտություն»: Չաղլայանն ափսոսանք հայտնեց, որ Ադրբեջանի քաղաքացին կարող է առանց վիզայի ժամանել Թուրքիա, մինչդեռ Ադրբեջանը վիզա է պահանջում Թուրքիայի քաղաքացիներից.

[10] *Габриелян Айк,* Турция создает зону свободной торговли с Нахичеванской Автономной Республикой, Институт Ближнего Востока, 23.06.2017.

«Բարդ է Ադրբեջանին հասկանալը, որը Ռուսաստանի քաղաքացիների համար վերացրել է վիզային ռեժիմը, մինչդեռ Թուրքիայի քաղաքացիների համար՝ ոչ»[11]:

Ուշագրավ է, որ այն բանից հետո, ինչ հայտնի դարձավ, որ Թուրքիան ՆԻՀ-ի հետ հիմնելու է ազատ առևտրի գոտի, որոշ փորձագետներ կարծիք հայտնեցին, որ Ադրբեջանը ՆԻՀ-ը հանձնեց Թուրքիային: Պատահական չէր, որ ԲԹԿ բացման շեմին Նիհաթ Զեյբեքջին Իգդիրում անցկացված Թուրք-ադրբեջանական գործարար ֆորումի ժամանակ հայտարարեց, որ Թուրքիայի կառավարության որոշմամբ մաքսատուրքերից ազատվել են ՆԻՀ-ից մատակարարվող ապրանքները: Այդ որոշումն առնչվում է 43 անուն ապրանքի, որոնցից 14-ը արդյունաբերական են, իսկ մնացյալը՝ գյուղատնտեսական: Այդպիսով, յուրաքանչյուր տարի ՆԻՀ-ում արտադրվող $100 մլն ապրանքներ Թուրքիա կներկրվեն առանց մաքսատուրքերի վճարման[12]:

բ) Հոկտեմբերի 31-ին Նիհաթ Զեյբեքջին Բաքվում թուրքական *Ziraat Bank*-ի (Գյուղատնտեսական բանկի) մասնաճյուղի բացման արարողակարգի ժամանակ հայտարարեց, որ Թուրքիան ու Ադրբեջանը պատրաստվում են 2018թ. վերացնել ապրանքների փոխադարձ մատակարարումների համար մաքսատուրքերը (ԲԹԿ հիմնական գործունեությունը մեկնարկելու է 2018թ., ներկայում տվյալ երկաթուղով բեռնափոխադրումները կրում են փորձնական բնույթ): Ըստ թուրք նախարարի՝ դա հնարավոր կդառնա Թուրքիայի և Ադրբեջանի միջև նոր տնտեսական պայմանագրի կնքմամբ, որը կողմերին հնարավորություն կտա արտոնյալ պայմաններով առևտուր կատարել միմյանց միջև[13]: Դրանից երկու օր առաջ էլ Ադրբեջանի էկոնոմիկայի նախարար Շահին Մուսթաֆանն Իգդիրում անցկացված Թուրք-ադրբեջանական գործարար ֆորումի ժամանակ հայտարարել էր, որ Թուրքիան և Ադրբեջանը բանակցություններ են վարում արտոնյալ առևտրի համաձայնագրի վերաբերյալ՝ հավելելով, որ

[11] Çağlayan: Ruslarla vize kalkarken Azerbaycan'ı anlamak zor!, Haber7, 27.10.2010.
[12] Nahçıvan'daki tüm ürünler Türkiye ticaretinde serbest hale geldi, Haber Türk, 28.10.2017.
[13] *Нихат Зейбекчи*: Азербайджан и Турция намерены в 2018 году освободить взаимные поставки товаров от пошлин, Trend, 31.10.2017.

Ադրբեջանը Թուրքիայի տնտեսությունում կատարել է $10.1 մլրդ ներդրում, իսկ Թուրքիան Ադրբեջանի տնտեսությունում կատարել է $11.7 մլրդ ներդրում[14]:

ԲԹԿ բացումից մոտ մեկ ամիս առաջ՝ 2017թ. սեպտեմբերի վերջին, Նիհաթ Զեյբեքջին հայտնել էր, որ Թուրքիան և Ադրբեջանը ստորագրելու են արտոնյալ առևտրի համաձայնագիր, սակայն չէր հայտնել դրա ստորագրման ստույգ ժամկետը: Նրա խոսքերով՝ Ադրբեջանի հետ առևտրային հարաբերությունների զարգացումն Անկարայի առաջնահերթություններից մեկն է, և Թուրքիան հատուկ ուշադրություն է հատկացնում Ադրբեջանի հետ առևտրային կապերի զարգացմանը[15]: Ուշագրավ է, որ Զաֆեր Չաղլայանը դեռևս 2012թ. էր հայտարարել, որ 10 տարում 10 անգամ աճել է Թուրքիայի ու Ադրբեջանի միջև ապրանքաշրջանառության ծավալը, և որ երկու երկրները ստորագրելու են արտոնյալ ռեժիմով առևտրի պայմանագիր[16]:

Ինչ վերաբերում է Ադրբեջանի կողմից Թուրքիայի քաղաքացիների համար վիզային ռեժիմի վերացման խնդրին, ապա ներկա դրությամբ այս հարցում չկա առաջընթաց: Կարծում ենք, որ Թուրքիան դա կօգտագործի որպես նախապայման՝ իր տարածքում Կարս-Իգդիր-Նախիջևան (ԿԻՆ) երկաթգծի կառուցման համար, որը ԲԹԿ-ի նման նույնպես կշրջանցի Հայաստանը: Ի սկզբանե հայտարարվել էր, որ ԿԻՆ նախագծի իրագործումը պետք է տեղի ունենա ԲԹԿ նախագծի իրագործումից հետո, և ստացվում է, որ Թուրքիան, ձգձգելով ԲԹԿ նախագծի իրագործումը, ինքնաբերաբար ձգձգում էր նաև ԿԻՆ նախագծի իրագործումը, որը կարևոր նշանակություն ունի նաև Ադրբեջանի համար: Ավելի վաղ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը հայտարարել էր, որ իրենք ՆԻՀ-ը դուրս կբերեն երկաթուղային շրջափակումից, և ԿԻՆ նախագիծը նպաստելու է դրան (հետագայում ՆԻՀ-ը կարող է Ադրբեջանի հետ երկաթուղային կապ հաստատել նաև Իրանի տարածքով): Ավելին, ՆԻՀ-ը ԿԻՆ երկաթգծի միջոցով կարող է Թուրքիայի տարածքով դուրս գալ դեպի Եվրոպա ու Մերձավոր Արևելք, իսկ Թուրքիան, իր հերթին, դրա միջոցով կկարողանա դուրս գալ

[14] Шахин Мустафаев озвучил объем азербайджанских инвестиций в Турцию, Minval.az, 29.10.2017.

[15] Ekonomi Bakanı Nihat Zeybekci Hürriyet'in sorularını yanıtladı, Hürriyet, 27.09.2017.

[16] Türkiye Azerbaycan Gürcistan İş Forumu, Haberler.com, 09.06.2012.

դեպի Իրան ու Պակիստան (ՆԻՀ-ը համարվում է Թուրքիայի հետ ցամաքային սահման ունեցող միակ «թյուրքական տարածքը», այն, ըստ էության, կապող օղակ է Թուրքիայի և ողջ Թուրանի միջև, Ադրբեջանի նախկին նախագահ Հեյդար Ալիևը ժամանակին ՆԻՀ-ը որակել է որպես դեպի թուրք-իսլամական աշխարհ բացվող դուռ)։

Ներկա դրությամբ Թուրքիայի և Իրանի միջև երկաթուղային հաղորդակցությունն անցնում է Վանա լճի վրայով (Վանի ու Դատվանի միջև գործում է լաստանավային հաղորդակցություն), որը Թուրքիայի տարածքում պարբերաբար ենթարկվում է Քրդստանի աշխատավորական կուսակցության (*PKK*) զինյալների հարձակումներին (Իրանն այդ պատճառով ժամանակ առ ժամանակ հրաժարվում է տվյալ (Անկարա-Թեհրան) երկաթգծի շահագործումից)[17]։ Ապագայում ԿԻՆ երկաթգիծը նույնպես կարող է դառնալ *PKK* թիրախ՝ հաշվի առնելով, որ 2015թ. սեպտեմբերին *PKK*-ն Իգդիր նահանգի Դիլուջու սահմանային անցակետի մոտ (ՆԻՀ սահման) պայթեցրել է թուրք ոստիկանների ավտոբուսը՝ սպանելով 14 ոստիկանի[18]։ Ուշագրավ է նաև, որ 2015թ. հուլիսի վերջին *PKK*-ն Սարիղամիշի շրջանում բեռնատար գնացքի անցման ժամանակ պայթեցրեց Կարս-Էրզրում երկաթգիծը[19], որը ներկայում ԲԹԿ շարունակությունն է։ Սա նշանակում է, որ ապագայում *PKK*-ն կարող է պայթեցնել նաև այս երկաթգիծը։ Սակայն երկու երկաթգծերն էլ ապագայում որքան շատ ձեռք բերեն միջազգային նշանակություն, այնքան *PKK*-ի համար ավելի կբարդանա դրանք պայթեցնելը։ Ամեն դեպքում *PKK* վերոնշյալ գործողությունները որոշակի ռիսկեր են առաջացնում Թուրքիայի՝ երկաթուղային հանգույցի վերածվելու նախագծի իրագործման համար։

ԿԻՆ նախագծի իրագործման դեպքում Թուրքիան կարող է հավակնել նաև Պարսից ծոցից դեպի Սև ծով տրանսպորտային միջանցքին մասնակցություն ունենալուն՝ չնայած 2016թ. դեկտեմբերին Իրանի նախագահ Հասան Ռոհանին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի հետ համատեղ մամուլի ասուլիսի ժամանակ հայտարարել էր, որ Հայաստանը և

[17] *Габриелян Айк*, О строительстве железной дороги Карс-Игдыр-Нахичевань-Иран, Институт Ближнего Востока, 03.06.2017.

[18] At least 14 policemen killed in PKK attack in eastern Turkey, Hürriyet Daily News, 08.09.2015.

[19] Sarıkamış'ta tren hattına bombalı saldırı: 1 ölü, Milliyet, 30.07.2015.

Իրանը կարող են մաս կազմել Պարսից ծոց-Սև ծով տրանսպորտային միջանցքին[20]: Սակայն Թուրքիան տվյալ հարցում ունի նաև այլընտրանքային տարբերակ. 2017թ. մարտին Վանի արդյունաբերական գոտու նախագահ Շեմսեթթին Բոզքուրթը հայտարարեց Վանից Տրապիզոն (Սև ծով) 690 կմ երկարությամբ երկաթգիծ կառուցելու անհրաժեշտության մասին՝ կարևորելով նաև Վանա լճից դեպի Ուրմիա լիճ և Գյուրբուլաքի սահմանային անցակետից դեպի Թուրքիայի այլ շրջաններ ճեպընթաց երկաթգծի կառուցումը[21]: Բացի այդ, 2017թ. սեպտեմբերի սկզբին Թուրքիայի ներքին գործերի նախարար Սուլեյման Սոյլուն հայտարարեց, որ իրենք մեծապես կարևորում են Էրզինջան (Երզնկա) - Տրապիզոն երկաթգծի կառուցումը[22] (Կարսից դեպի արևմուտք երկաթուղային ճանապարհին ընկած առաջին խոշոր քաղաքն Էրզրումն է, ապա գալիս է Էրզինջանը): Դրանից մեկ ամիս առաջ էլ Էրզինջան - Տրապիզոն երկաթգծի կառուցման հնարավորության մասին հայտարարել էր Ահմեթ Արսլանը՝ նշելով, որ Էրզինջանն այդպիսով կդառնա «մայր միջանցք»՝ արևմուտք-արևելք (ասենք, Անկարա-Կարս) և հյուսիս-հարավ (Տրապիզոն-Մուշ) ուղղություններով[23]:

Այս ամենը նշանակում է, որ ապագայում՝ տվյալ երկաթգծերի կառուցման դեպքում, Թուրքիան իր երկաթուղիներով կկարողանա հավակնել Պարսից ծոց - Սև ծով տրանսպորտային միջանցքին մասնակցություն ունենալուն: Ընդ որում՝ Թուրքիան սկսել է շեշտը դնել ճեպընթաց երկաթգծերի (*Yüksek Hızlı Tren, YHT*) կառուցման վրա, ինչը հետագայում կարող է մեծ առավելություն տալ նրան: Թուրքիայի կառավարության հատուկ ուշադրության կենտրոնում է երկրի խոշոր քաղաքների միջև երկաթուղային հաղորդակցության բարելավումը. ներկայում Թուրքիայում *YHT* երկարությունը կազմում է 1213 կմ, որից արդեն օգտվել է 29 մլն մարդ: 2017թ. սկզբին թուրքական մամուլը հայտնեց, որ ծրագրված է 2023թ. (Թուրքիայի Հանրապետության հիմնադրման 100-ամյակ) *YHT*-ով միմյանց կապել երկրի 18 նահանգ, երկրի երկաթգծերի ընդհանուր երկարությունը հասցնել մինչև 25.000 կմ-ի, որոնցից 3500 կմ-ն լինելու է

[20] Հայաստանը և Իրանը կարող են մաս կազմել Պարսից ծոց-Սև ծով տրանսպորտային միջանցքին. Ռոհանի, Armenpress, 21.12.2016.
[21] *Габриелян Айк*, О Третьем турецко-иранском форуме, Институт Ближнего Востока, 11.05.2017.
[22] Süleyman Soylu'dan Erzincan – Trabzon Demiryolu sözleri, Ray Haber, 02.09.2017.
[23] Bakan Arslan Erzincan Trabzon demiryolu için konuştu, Haber 61, 04.08.2017.

YHT (բավական արագ՝ *yüksek hızlı*) երկաթգիծ, իսկ 8500 կմ-ը՝ արագընթաց (արագ՝ *hızlı*) երկաթգիծ[24]: Թուրքիան նպատակադրվել է հետագայում ճեպընթաց գնացքներ գործարկել Էդիրնեի (եվրոպական հատված) և Կարսի միջև («Արևելյան ճեպընթաց»)[25]:

Նշենք, որ ԲԹԿ-ն Թուրքիային անհրաժեշտ էր նաև Վրաստանի հետ ուղիղ երկաթուղային հաղորդակցություն ունենալու և այդ առումով Հայաստանից (Կարս-Գյումրի-Թբիլիսի) կախվածություն չունենալու համար: Թուրքական կողմն այժմ, սակայն, չի պատրաստվում բավարարվել ձեռք բերածով. 2017թ. ապրիլին Ռիզեի քաղաքային խորհրդի նախագահ Մեթին Թոփչուն հայտարարեց, որ մոտ ժամանակներս Սամսուն-Սարփ (Բաթում) *YHT*-ի իրագործումը երազանք չէ՝ հավելելով, որ այդ հարցն օրակարգում կհայտնվի Անկարա-Սամսուն *YHT*-ի կառուցումից հետո: Անկարայի նահանգապետ Իբրահիմ Շահինն, իր հերթին, հայտարարել է, որ արդեն ամփոփվել են Անկարա-Սամսուն *YHT*-ի կառուցման մրցույթի արդյունքները, և որ նոր երկաթգծի շնորհիվ ճեպընթաց գնացքը մի քաղաքից մյուսը կհասնի ընդամենը 1.5 ժամում: Ի դեպ, արդեն հայտնի է Սամսուն-Բաթում երկաթգծի երթուղին. այն անցնելու է Օրդու-Տրապիզոն-Ռիզե-Գիրեսուն-Գյումուշհանե-Արդվին երթուղով (Արևելյան Սևծովյան տարածաշրջան):

Ամփոփելով նշենք, որ ԲԹԿ-ն կարևոր տեղ է զբաղեցնում երկաթուղային հանգույցի վերածվելու Թուրքիայի պլաններում: ԲԹԿ-ն, բնականաբար, կմեծացնի երկրի տնտեսական, նաև քաղաքական ազդեցությունն Ադրբեջանում ու Վրաստանում, Թուրքիան դրա միջոցով երկաթուղային կապ կհաստատի թյուրքական երկրների հետ, կմեծացնի Վրաստանում (Ջավախք) թուրքական և թյուրքական տարրի ներկայությունը: Հոկտեմբերի 30-ից Ախալքալաքի երկաթուղային կայարանում արդեն ծածանվում են Թուրքիայի ու Ադրբեջանի դրոշները, ինչը բացասական (բարոյալքող) ազդեցություն կարող է ունենալ ջավախահայերի հոգեբանության վրա: Թուրքիան այսուհետ նոր եռանդով կսկսի Վրաստանի իշխանությունների հետ բանակցություններում արծարծել Ջավախքում թուրք-մեսխեթցիների (Ախալցխայի թուրքեր) վերաբնակեցման հար-

[24] 18 il yüksek hızlı demiryolu ağıyla birbirine bağlanacak, TRT Haber, 19.01.2017.
[25] Edirne'den Kars'a tek hat hızlı tren geliyor, Haber 7, 13.04.2012.

ցը՝ հիմք վերցնելով այն, որ ԵՄ-ին անդամակցելուց առաջ Վրաստանը պարտավորվել է լուծել թուրք-մեսխեթցիներին հետ վերադարձնելու հարցը (1944թ. Ստալինի հրամանով նրանց բռնագաղթեցրել են Միջին Ասիա)։

Նկատենք, որ վերջին տարիներին Էրդողանի հրահանգով Դոնբասի հակամարտության գոտուց հարյուրավոր թուրք-մեսխեթցիներ են վերաբնակեցվել Երզնկայի, Մուշի, Բիթլիսի և այլ շրջաններում, ինչն ունի թե՛ մոտակա, թե՛ հեռահար նպատակներ։ Դա կարող է բարձրացնել Էրդողանի իմիջը մուսուլմանների շրջանում (համայն աշխարհում), որ նա չի լքում նեղության մեջ հայտնված (սուննի) մուսուլմաններին։ Այդ քայլը տեղավորվում է նաև իրեն խալիֆ երևակայելու Էրդողանի հավակնությունների շրջանակներում։ Բացի այդ, թուրք-մեսխեթցիները կարող են մի փոքր փոխել երկրի արևելյան, քրդաբնակ շրջանների ժողովրդագրական պատկերը, որը բավական մտահոգում է թուրքական իշխանություններին, ինչպես նաև քաղաքացիություն ստանալու դեպքում առաջիկա (2019թ.) կարևոր ընտրությունների ժամանակ քվեարկել իրենց պատերազմի արհավիրքներից ազատած, իրենց համար Թուրքիայում բարեկեցիկ պայմաններ ապահոված Էրդողանի ու նրա կուսակցության օգտին։ Թուրքիայի արևելյան շրջաններում վերաբնակեցված թուրք-մեսխեթցիները կարող են ծառայել նաև որպես գյուղական պահապաններ և մասնակցել *PKK*-ի դեմ զինված պայքարին։

Թուրք-մեսխեթցիների վերաբնակեցման հարցում Թուրքիայի իշխանությունների հեռահար նպատակը կարող է լինել այն, որ ժամանակի ընթացքում նրանք կարող են հարցը սուր ձևով բարձրացնել Վրաստանի իշխանությունների առջև, հայտարարել, որ ժամանակին ոչ թե Թուրքիան, այլ հենց Վրաստանն է ստանձնել թուրք-մեսխեթցիների վերաբնակեցումը, ճնշումներ բանեցնել նրա վրա՝ իրենց նպատակին հասնելու համար։ Չենք բացառում, որ Թուրքիան կփորձի Ջավախքում թուրք-մեսխեթցիների վերաբնակեցման ու Քվեմո Քարթլիում բնակվող ադրբեջանցիների միջոցով Վրաստանի հարավում «թյուրքական միջանցք (պատնեշ)» բացել դեպի Ադրբեջան՝ այդպիսով հյուսիսից օղակելով Հայաստանը[26]։

[26] *Габриелян Айк,* Переселение турок-месхетинцев и планы Турции, Институт Ближнего Востока, 26.09.2017.

ԷՆԵՐԳԵՏԻԿ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Արմեն Մանվելյան[*]

Էներգետիկ գործոնը կարևոր տեղ է զբաղեցնում արդի միջազգային հարաբերություններում, հետևաբար էներգետիկ ռեսուրսների վերահսկողության հարցը միշտ էլ վճռական նշանակություն է ունեցել միջպետական հարաբերություններում։ Էներգակիրների կայուն արտահանումը և ներմուծումը դարձել են այդ հարաբերությունների կարևոր բաղկացուցիչը։ Քանի որ էներգակիրները պետությունների տնտեսական զարգացման արյունատար անոթներն են, հետևաբար՝ դրանց կայուն մատակարարման հարցը միշտ էլ վճռական է եղել բոլոր պետությունների համար։

Սակայն էներգակիրների կարևորությունն էլ ավելի նշանակալի դարձավ արդյունաբերության արագ զարգացմանը զուգահեռ, երբ ներքին այրման շարժիչը դարձավ կարևորագույն գործոն պետությունների առաջընթացի ապահովման հարցում։ Այսօր աշխարհում արդյունահանվող նավթի 80%-ը սպառվում է որպես բենզին և դիզվառելիք, իսկ դրա պահանջարկի շարունակական աճը պայմանավորված է ավտոմեքենաների պահանջարկի աճով, ինչը հատկապես նկատելի է արագ զարգացող Չինաստանում և Հնդկաստանում։ Հետևաբար, առաջիկայում կարող ենք ականատեսը լինել էներգակիրների շուրջ ընթացող պայքարի մի նոր շրջանի, երբ, բացի ավանդական նավթից ու գազից, մրցակցություն կծավալվի նաև էներգետիկ նոր տեխնոլոգիաների շուրջ, ինչի նշանակությունը վճռական է դառնում հատկապես վերականգնվող էներգիայի արտադրության և սպառման ծավալների ընդլայնման հետ միասին։

Էներգետիկ հիմնախնդիրը միշտ էլ կարևորվել է էներգիա արտահանող և սպառող պետությունների կողմից, որոնք իրենց շահերի պաշտպա-

---

[*] ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող, էներգետիկ աշխարհաքաղաքականության և միջազգային անվտանգության մասնագետ, պ.գ.թ.,։

նության համար ստեղծել են տարբեր միջազգային կառույցներ, որոնց նպատակն էր միավորել նույն խնդիրներն ունեցող պետություններին և համատեղ պայքարել ընդհանուր պրոբլեմների լուծման ուղղությամբ: Նմանատիպ առաջին կառույցներից մեկը Նավթ արտահանող պետությունների կազմակերպությունն էր՝ ՕՊԵԿ-ը, որի նպատակն էր պաշտպանել նավթ արդյունահանող պետությունների շահերն անդրազգային նավթային ընկերություններից և նրանց թիկունքում գտնվող արևմտյան տերություններից:

Ընդհանրապես, պետք է նկատել, որ էներգետիկան միավորող հզոր ուժ ունի՝ պայմանավորված բոլոր պետությունների համար դրա կարևորությամբ: Եվրամիության միավորման հիմնական մոտիվացիան հենց էներգակիրներն էին, և իզուր չէ, որ 1951թ.[1] կնքված առաջին պայմանագիրը՝ Ֆրանսիայի ու Գերմանիայի միջև, որին հետագայում միացան եվրոպական այլ պետություններ, կոչվում էր «ածխի ու պողնձի» համաձայնագիր: Հետագայում, արդեն 1957թ., կնքվեց Եվրոպայի ատոմային էներգիայի միության ստեղծման պայմանագիրը, որոնք էլ հիմք հանդիսացան Եվրոպական լիարժեք միության ստեղծման համար[2]:

Միջազգային էներգետիկ գործակալություն

1973թ. հայտնի նավթային էմբարգոյից հետո, որը կազմակերպվեց ՕՊԵԿ անդամ պետությունների կողմից և որին աջակցեցին նավթ արդյունահանող այլ երկրներ ևս, նավթ սպառող պետությունները հասկացան, որ իրենց տնտեսությունները խոցելի են նմանատիպ կառույցների առաջ: Եվ ընդհանրապես, պետությունների նավթային կախվածությունը լուրջ սպառնալիքներ է ստեղծում իրենց ազգային շահերին: Բացի այդ, պարզ դարձավ, որ չկան նման քաղաքականությանը դիմակայելու գործուն մեխանիզմներ և կառույցներ:

Էներգակիրներ սպառող պետությունները 1961թ. ստեղծեցին Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը (ՏՀԶԿ), որը եվրոպական պետությունների, ԱՄՆ-ի և հետագայում դրանց միացած Ճապոնիայի տնտեսությունների համակարգման ու զարգացման, այդ թվում՝ վերլուծության ու զարգացումների հնարավոր սցենար-

[1] European Coal and Steel Community (ECSC), https://www.britannica.com/topic/European-Coal-and-Steel-Community
[2] Նույն տեղում:

ներով զբաղվող կազմակերպություն էր[3]: Նախատեսված էր, որ այս կառույցը նաև պետք է զբաղվի անդամ պետությունների տնտեսական շահերի պաշտպանության խնդիրներով, այդ թվում՝ էներգետիկ հիմնահարցերով: Հատուկ դրա համար ստեղծվել էին նաև նավթի և էներգետիկ հարցերի հանձնաժողովներ, որոնք պետք է դիմակայեին այն ճգնաժամերին, որոնք, հնարավոր է, ծագեին նավթի և ընդհանրապես էներգետիկ շուկայում առաջացած պատճառներով:

Սակայն 1973թ. նավթային էմբարգոն ցույց տվեց, որ այս կառույցը չունի բավարար ռեսուրս նման ճգնաժամերին դիմակայելու և համապատասխան քաղաքականություն մշակելու համար: Թեև վերջինս խորհուրդ էր տվել անդամ պետություններին կատարել նավթի հնարավորինս մեծաքանակ պահեստավորում, սակայն այն ժամանակ նման մատակարարումների սահմանափակության պայմաններում համապատասխան քանակով պահեստավորում իրականացնելը բավական բարդ էր: Բացի այդ, եվրոպական պետություններից շատերը չունեին հնարավորություններ նավթի մեծաքանակ պաշարներ պահեստավորելու համար[4]:

Ինչևէ, արդեն 1973թ. պարզ էր, որ ստեղծված իրավիճակում հարկավոր է ստեղծել նոր կառույց, որն ավելի մասագիտորեն կզբաղվեր էներգակիրներ սպառող պետությունների շահերի պաշտպանության խնդիրներով: Արդեն 1973թ. դեկտեմբերին ԱՄՆ պետքարտուղար Հենրի Քիսինջերն առաջարկեց հիմնադրել արդյունաբերական պետությունների շահերը պաշտպանող միջազգային էներգետիկ գործակալություն, իսկ Կոպենհագենում նույն այդ ժամանակ տեղի ունեցող գագաթաժողովում Արևմտյան Եվրոպայի մի շարք պետություններ նոր միջազգային կառույցի ստեղծման պատրաստակամություն հայտնեցին, որը կգործի Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) շրջանակներում[5]:

Մի քանի ամիս անց, 1974թ. Վաշինգտոնում ընթացող Էներգետիկ կոնֆերանսի ժամանակ նավթ սպառող 13 պետություն պաշտոնապես հայտարարեց, որ ՏՀԶԿ շրջանակներում ստեղծում են նոր կազմակեր-

[3] Convention on the Organisation for Economic Co-operation and Development, http://www.oecd.org/about/history/

[4] Scott, Richard (1994). *History of the IEA: The First 20 Years (PDF). Volume I: Origins and Structure. OECD/IEA. ISBN 92-64-14059-X. Archived from the original (PDF) on 2007-04-15, p. 34.*

[5] Նույն տեղում:

պություն իրենց էներգետիկ շահերի պաշտպանության համար՝ Միջազգային էներգետիկ գործակալությունը (ՄԷԳ)։ Որոշում ընդունվեց, որ այս կառույցը, որը փաստորեն հիմնվում էր արդյունաբերական պետությունների կողմից, պետք է զբաղվի էներգետիկ շուկայի վերլուծությամբ, վիճակագրական տվյալների հավաքագրմամբ, ունենա իր աշխատակազմը, իրավական կարգավիճակը և այլն։ Որոշվեց նաև, որ կառույցը, լինելով ՏՀԶԿ համակարգում, այնուամենայնիվ, կունենա կառավարման ինքնավարություն և գործողությունների ինքնուրույնություն[6]։

Միջազգային էներգետիկ գործակալությունը պաշտոնապես հիմնադրվեց 1974թ. նոյեմբերի 18-ին։ Որոշում ընդունվեց նաև, որ դրան կարող են անդամակցել միայն ՏՀԶԿ անդամ պետությունները, բացառություն կատարվեց միայն Չիլիի, Իսլանդիայի, Մեքսիկայի և հետագայում՝ Սլովենիայի համար։ 2014թ. ՏՀԶԿ-ին միացավ Էստոնիան՝ դառնալով նաև ՄԷԳ անդամ։ Բրազիլիան, Չինաստանը, Հնդկաստանը, Ինդոնեզիան, Մարոկոն, Սինգապուրը և Թաիլանդը ՄԷԳ ասոցացված անդամի կարգավիճակ ունեն։

Ընդհանուր առմամբ, կազմակերպությանն անդամակցում է 29 պետություն՝ Ավստրալիան, Ավստրիան, Բելգիան, Կանադան, Չեխիան, Դանիան, Ֆինլանդիան, Ֆրանսիան, Գերմանիան, Հունաստանը, Հունգարիան, Իտալիան, Ճապոնիան, Հարավային Կորեան, Լյուքսեմբուրգը, Նիդերլանդները, Նոր Զելանդիան, Նորվեգիան, Լեհաստանը, Պորտուգալիան, Սլովակիան, Իսպանիան, Շվեդիան, Շվեյցարիան, Թուրքիան, Մեծ Բրիտանիան, Ամերիկայի Միացյալ Նահանգները։

Ստեղծված կառույցի կենտրոնականը Փարիզում է։ Այն որպես էներգետիկ հարցերով խորհրդատու կառույց աշխատում է կազմակերպության անդամ բոլոր պետությունների համար՝ միաժամանակ համագործակցելով ոչ անդամ այլ պետությունների և կառույցների հետ։ ՄԷԳ նպատակներից է վերլուծել և հասկանալ նավթի շուկայում տեղի ունեցող փոփոխությունները՝ առաջարկելով կանխարգելիչ այն քայլերը, որոնք կնպաստեն նավթային և ընդհանրապես էներգետիկ ճգնաժամից խուսափելուն։

Կազմակերպությունն ակտիվ աշխատում է նաև ՕՊԵԿ անդամ պետությունների, ինչպես նաև ոչ անդամ նավթ արտահանող այլ պետու-

[6] Նույն տեղում, էջ 20։

թյունների, օրինակ՝ Ռուսաստանի հետ: Միջազգային էներգետիկ գործակալության քաղաքականության առանցքում էներգետիկ անվտանգությունն է, տնտեսական զարգացումը և շրջակա միջավայրի պաշտպանությունը: Սա կոչվում է երեք E-ի քաղաքականություն (*Energy Security, Economic Development and Environmental Protection*), ինչը մշակվում է ՄԷԳ-ի կողմից և իրականացվում անդամ պետությունների տարածքում[7]: Ավելի ուշ կազմակերպությունն իր ուշադրությունը կենտրոնացրեց կլիմայի փոփոխությունների խնդիրների վրա, իսկ հետագայում սկսեց զբաղվել նաև, այսպես կոչված, այլընտրանքային էներգիայի աղբյուրներով, վերականգնվող էներգետիկայով, էներգախնայողության խնդիրներով, նոր էներգետիկ տեխնոլոգիաներով և այսպես կոչված ռացիոնալ էներգետիկ քաղաքականության մշակմամբ ու դրա առաջմղմամբ անդամ պետություններում:

Միջազգային էներգետիկ գործակալությունն անդամ պետություններից պահանջում է, որ վերջիններս պահեստավորեն նախորդ տարի սպառած նավթի 90 օրվա պաշարի չափով նավթ: Սա էներգետիկ անվտանգության կարևոր պայմաններից է ՄԷԳ անդամ պետությունների համար: Հայտնի է, որ, օրինակ, 2009թ. դրությամբ ՄԷԳ անդամ պետություններում կար պահեստավորված մոտ 4.3 մլրդ բարել նավթ, ինչը կազմում է համաշխարհային նավթի պաշարների մոտ 0.3%-ը[8]: Համարվում է, որ նման քանակությամբ նավթի պահեստավորումը բավարար է՝ անհրաժեշտության դեպքում ապահովել պետությանը նավթային հնարավոր էմբարգոյի հասցրած վնասներից և նվազեցնել հնարավոր ռիսկերը պետության համար: Բացի այդ, գործակալության որոշմամբ, անդամ պետությունները երբեմն-երբեմն կարող են միաժամանակ վաճառքի դուրս բերել իրենց պահեստավորած նավթը՝ այսպիսով ազդելով միջազգային բորսաներում նավթի գնի ձևավորման քաղաքականության վրա:

Միջազգային էներգետիկ գործակալությունն իր գործունեության ընթացքում մեծ տեղ է հատկացնում էներգիայի պահեստավորման խնդիրներին և նոր տեխնոլոգիաների առաջմղմանը՝ այն դիտարկելով որպես առաջիկայում էներգետիկ անվտանգության կարևոր պայման: Ան-

[7] "IEA Energy Scenarios: Change We Have to Believe In". Allianz Knowledge. 2008-06-23. Retrieved 2008-07-03.
[8] Energy Conservation through Energy Storage (ECES), https://iea-eces.org/

ցած դարի 80-ական թվականներից վերջինս սկսել է, այսպես կոչված, Էներգիայի կոնսերվացումը դրա պահեստավորման միջոցով ծրագիրը (*Energy Conservation through Energy Storage (ECES*):

Այս ծրագրի իրականացման և համապատասխան տեխնոլոգիաների ստեղծման համար գործակալությունը 1981-2015թթ. կազմակերպել է բազմաթիվ գիտաժողովներ, որոնց նպատակն է մշակել ջերմային, նաև էլեկտրաէներգիայի պահեստավորման նորանոր միջոցներ: Վերջին նման գիտաժողովը տեղի է ունեցել Պեկինում (Ջերմային էներգիայի պահեստավորման 13-րդ միջազգային գիտաժողովը)[9]: Նման մեծ ուշադրությունը էներգիայի կոնսերվացմանը և պահեստավորմանը պայմանավորված է այն հաշվարկով, որ այդպիսով հնարավոր կլինի նվազեցնել էներգիայի գինը և զարգացնել վերականգնվող էներգետիկան, որի աշխատանքը, ինչպես հայտնի է, սեզոնային բնույթ է կրում:

Միջազգային էներգետիկ գործակալությունն իր աշխատանքի հիմքում տեսնում է էներգետիկ քաղաքականության հարցում անդամ պետությունների միասնական և համահունչ գործունեությունը, ինչը հնարավորություն է տալիս դիմակայել և մեղմել էներգակիրներ արդյունահանող պետությունների քաղաքականությունը: Այս հարցում ՄԷԳ-ն առաջին հերթին հենվում է նավթի և գազի համապատասխան պաշարների պահեստավորման և ժամանակ առ ժամանակ դրանք միջազգային շուկայում վաճառելու միջոցով գնագոյացման վրա ազդելու քաղաքականության վրա: Սակայն հիմնական շեշտը դրվում է էներգետիկ նոր, այլընտրանքային միջոցների ստեղծման, ինչպես նաև ջերմային, էլեկտրաէներգիայի և այլ տիպի էներգիայի պահեստավորման ու նորարարական տեխնոլոգիաների զարգացման վրա: ՄԷԳ-ը սպառող պետությունների էներգետիկ քաղաքականության համակարգմամբ կարողացել է կանխել խորքային ճգնաժամերը և, առավել ևս՝ էմբարգոների կրկնությունը: Հետևաբար, կարելի է գնահատել, որ այն առայժմ կարողանում է իրականացնել իր հիմնական առաքելությունը՝ էներգետիկ շուկայի կայունության պահպանմամբ սպառող պետությունների շահերի պաշտպանությունը:

[9] IEA ECES Programme (2015). "Greenstock 2015", https://iea-eces.org/

«ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԼՎԱՑՔԱՏՈՒՆԸ» ԵՎ ԲՈՒԼՂԱՐԱԿԱՆ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՁԱԽ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՀԸ

Գեորգի Կոլարով[*]

Բուլղարիայի կոմունիստական կուսակցության (ԲԿԿ) ժառանգորդները համալրեցին Բուլղարիայի սոցիալիստական կուսակցության (ԲՍԿ) շարքերը և փոքր-ինչ գաղափարախոսական փոփոխության ենթարկվելով՝ հարմարվեցին նոր իրականությանը: Նրանք արևմտամետ կողմնորոշումը համադրում են հետխորհրդային հարուստ հանրապետությունների (այդ թվում՝ Ադրբեջանի Հանրապետության) հետ տնտեսական առնչությունների հետ:

Հայտնի է, որ բուլղարական շատ քաղաքական գործիչներ, դիվանագետներ, գիտնականներ, լրագրողներ հարստացել են ադրբեջանական ժողովրդի հաշվին: Առայժմ բացահայտվել է միայն Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկում Բուլղարիայի Հանրապետության ներկայացուցիչ (Լոնդոնում) Կալին Միտրևի անունը: Սակայն նա սառցաբեկորի ընդամենը վերին շերտն է: Սպասվում է, որ առաջիկայում «ջրի երես դուրս կգան» նաև Բուլղարիայի միջազգային հեղինակությունը վարկաբեկող շատ այլ անձանց անունները:

Բաքվի ռեժիմը ֆինանսատնտեսական կախվածության մեջ է դրել բուլղարացի ձախերի էլիտային՝ նպատակ ունենալով այն ենթարկեցնել իր աշխարհաքաղաքական նպատակներին: Եվ պետք է ասել՝ հաջողել է:

Բաքվի հանցավոր ռեժիմը միլիարդներ է ծախսում իր խափանված իմիջը պահպանելու համար: Ճիշտ է՝ միջոցները պակասել են, բայց Կալին Միտրևի համար դրանք գտնվեցին. բրիտանական «Գարդիան», ֆրանսիական «Մոնդ» և տասնյակ այլ եվրոպական պարբերականների (դրանց մեջ է

[*] Քաղաքական գիտությունների թեկնածու, Ժողովուրդների բարեկամության Ռուսաստանի ինստիտուտի դոկտորանտ, Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարանի (Երևան) և Տնտեսագիտական համալսարանի (Վառնա) դասախոս:

նաև բուլղարական «Բիվոլ» կայքը) տվյալներով՝ նրա բանկային հաշիվներին բազմիցս խոշոր գումարներ են փոխանցվել Բաքվից։ Փոխանցումների ընդհանուր գումարը գերազանցում է 425 հազ. եվրոն։ Ամենամեծ փոխանցումը՝ 225 հազ. եվրո, կատարվել է այն բանից 3 օր հետո, երբ նրա տիկինը՝ Իրինա Բոկովան, ՅՈՒՆԵՍԿՕ-ի փարիզյան գլխավոր շենքում (նա այդ կազմակերպության գլխավոր քարտուղարն է) Ադրբեջանի նախագահի տիկնոջ՝ Մեհրիբան Ալիևայի հետ միասին բացել է «Ադրբեջան. հանդուրժողականության երկիր» ցուցահանդեսը։ Այս անհեթեթ բառակապակցությունն ապրիլմեկյան կատակի պես է հնչում կողմնակի դիտորդի համար, բայց Բաքվի և Սումգայիթի հայերը լավ գիտեն դրա ողբերգական իմաստը, ինչը, ցավոք, չի հասկանում ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր քարտուղարը։

Ե՛վ Կալին Միտրևը, և՛ նրա ընտանիքի որոշ անդամներ, և՛ նրա մերձավոր շրջապատը կվճարեն *PR*-ի համար, որը տարիներ շարունակ վարվում է հօգուտ Բաքվի տոտալիտար ռեժիմի։ Մանավանդ նրանք, ովքեր ներկայացնում են համաշխարհային միջազգային կազմակերպությունները կամ իրենց հեղինակությամբ և կարգավիճակով լեգիտիմացնում են Բաքվի ռեժիմի ակտիվ միջոցառումները։ Այս առիթով ՀՀ նախկին վարչապետ, այժմ՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի նախագահ Տիգրան Սարգսյանը 2012թ. ապրիլի 23-ին հայտարարել էր. «Բաքուն այդ հարթակը կօգտագործի ոչ թե երկխոսության, այլ ագիտացիայի համար՝ փորձելով վարկաբեկել Հայաստանը։ Պետք է կասեցնել Ադրբեջանի նման քայլերը։ Նախիջևանում Ադրբեջանի իշխանությունները ոչնչացրին բազմաթիվ խաչքարեր, ինչը հանցագործություն է քաղաքակրթության դեմ»[1]։ Հավանաբար, նույն կերպ է մտածում նաև նրա հարազատ եղբայրը՝ Սոֆիայում Հայաստանի դեսպան Արմեն Սարգսյանը։ Այնպես որ, դիվանագիտական սկանդալից խուսափել չի հաջողվի։ Մանավանդ որ «այդ հարթակը» ասելով նկատի է առնվում «Քաղաքակրթությունների երկխոսություն. քաղաքական կուսակցությունների փորձը» համաժողովը (Բաքու, 23 ապրիլի 2012թ.)։

[1] www.regnum.ru/news/polit/1524075.htlm www.news.bg/crime/tsatsarov-rasporedi-kalin-mitrev-da-se-proveri.html

Կալին Միտրևը և նրա շրջապատը կհայտնվեն նաև ԶԼՄ հրապարակումների կիզակետում: Արդեն հրապարակումներ կան նրա և իր տիկնոջ՝ Իրինա Բոկովայի անունների հետ կապված[2]: Հանրապետության գլխավոր դատախազ Սոտիր Ցացարովը կարգադրել է ստուգել նրանց վերաբերյալ նշված փաստերը: Չի բացառվում, սակայն, որ նրանք «մաքուր դուրս գան» այս պատմությունից (Բուլղարիայում նման բաներ պատահում են):

Անցած տարի Ռուսաստանի բարեկամ բուլղարացի ձախերը անկեղծորեն սատարում էին ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր քարտուղար Իրինա Բոկովայի ընտրարշավը, որը քիչ էր մնում դառնար ՄԱԿ գլխավոր քարտուղարը[3]: Իհարկե, այդ ժամանակ էլ էին տագնապալի ազդանշաններ ստացվում այն մասին, որ այս տիկինը շռայլ ժեստեր է անում Ադրբեջանի ուղղությամբ, օրինակ՝ աջակցում է հայտնի երգիչ, Ադրբեջանի մշակույթի նախկին նախարար, Մոսկվայում այդ երկրի դեսպան Փոլադ Բյուլ-Բյուլ Օղլիի թեկնածությունը ՅՈՒՆԵՍԿՕ-ի ղեկավարի պաշտոնում: Այս մարդն է, որը, որպես մշակույթի նախարար, կրում է Արցախի և Նախիջևանի խաչքարերի ոչնչացման պատասխանատվությունը, նա է, որ արցախահայերի ցեղասպանության կոչ է անում: Եվ եթե Իրինա Բոկովան զբաղեցներ Պան Գի Մունի աթոռը, Բյուլ-Բյուլ Օղլին կդառնար ՅՈՒՆԵՍԿՕ-ի ղեկավար: Այն ժամանակ մենք բոլորս կարծում էինք, թե այս կինը մոլորության մեջ է: Գուցե ամուսինն էր մոլորեցրել՝ նրանից թաքցնելով իր իրական եկամուտների չափը. նա արդեն խոստովանել է լրատվամիջոցներին, որ 425 հազ. եվրո է ստացել հիդրոտեխնիկական ոլորտում խորհրդատվության համար... Թեև հազիվ թե Կալին Միտրևը երբևէ հանգստացած լինի ջրամբարների մոտ. չէ՞ որ հարուստները հանգստանում են թանկարժեք հանգստավայրերում[4]:

Բուլղարացիների մեջ ևս տարածված է հետևյալ արտահայտությունը. «Ես էլ եմ մարդ»: Այն իմաստով, որ ամուսինը կնոջը չի տեղեկացրել իր իրական եկամուտների մասին և այն, ինչ թաքցնում է, իրացնում է նրանից թաքուն... Սա արդեն Միտրև ընտանիքի անձնական գործն է:

[2] «Вахан», 13.09.2017, Пловдив, с. 2.
[3] www.rabkor.ru/columns/interview/2016/03/24/who-will-be-the-next-un-secretary-general/
[4] www.offnews.bg/sviat/saprugat-na-bokova-za-azerbajdzanskata-bezmislena-spekulatcia-664537.html

Բայց չապացուցված աղբյուրից եկամուտներ ունենալը խստորեն պատժվում է ԵՄ-ում: Իսկ 425 հազ. եվրոն, մեղմ ասած, փոքր գումար չէ: Իսկ ինչի՞ համար են այդ գումարը տվել նրան:

Իրինա Բոկովան ավելի քան շատ բան է արել Բաքվի ռեժիմը գովազդելու համար: Եվ ամենայն հավանականությամբ նրան ըստ արժանվույն են գնահատել «Քաղաքակրթությունների երկխոսություն. քաղաքական կուսակցությունների փորձը» համաժողովում, որին մասնակցում էին հետկոմունիստական բուլղարական ձախ կուսակցության հայտնի դեմքեր: Եթե հետաքննությունն ապացուցի, որ նրանց այցելությունն Ադրբեջան թելադրված չի եղել «ադրբեջանական եղբայրական ժողովրդի հետ» բարեկամության և համագործակցության հաստատման ցանկությամբ, այլ կապված է եղել թանկարժեք նվերներ ստանալու և բանկային հաշիվները համալրելու հետ, կստացվի, որ հետկոմունիստական ձախ կուսակցությունները և քաղաքական գործիչները բարոյական իրավունք չունեն մասնակցել առհասարակ բուլղարական քաղաքական կյանքին. ցանկացած պահի Սոֆիայում Ադրբեջանի եռանդուն դեսպան Նարգիզ Ակիֆ Գուրբանովան կարող է սպառնալ նրանց կոմպրոմատով:

Շատ հավանական է, որ նա այդ նույն վարկաբեկիչ նյութերն ունենա նաև նախկին եվրապատգամավոր Եվգենի Կիրիլովի՝ հակահայկական բանաձևերի հեղինակի մասին: Հայաստանի նախկին փոխարտգործնախարար Արման Կիրակոսյանը 7 տարի առաջ նրա մասին ասել էր. «Եվգենի Կիրիլովը երբեք չի եկել մեզ մոտ, ոչինչ չգիտի մեր երկրի մասին և իրավունք չունի որոշումներ ընդունել և գրել այդ հարցի շուրջ: Այս դեպքը խիստ տհաճ հետևանքներ ունի: Մեր հանրային կարծիքը զարմացած է և մտահոգված այն փաստից, որ եղբայրական Բուլղարիայի եվրապատգամավորը կարող է նման բան գրել: Չեմ կարող կանխատեսել, թե այս տխուր փաստը որքանով կանդրադառնա երկկողմանի հարաբերությունների վրա, բայց աննկատ մնալ չի կարող»[5]:

Բաքվի հետ կապված բուլղարացի քաղաքական գործիչները հիմնականում արդեն ավարտել են իրենց քաղաքական, գիտական, լրագրո-

[5] www.news.bg/interviews/arman-kirakosyan-turtsiya-ima-shans-da-si-pomogne-ako-priznae-armenskiya-genotsid.html

ղական կարիերան: Բայց նրանք, ովքեր դեռ աշխատում են (Իրինա Բոկովա և Կալին Միտրև ամուսնական զույգը), պետք է հրաժարական տան: Այլապես կշարունակվի երկու ուժեղ հետկոմունիստական կուսակցությունների՝ Բուլղարիայի սոցիալիստական կուսակցության և «Այլընտրանք բուլղարական վերածննդի համար» կուսակցության վարկաբեկումը: ԵՄ-ում սկսվում է Ադրբեջանի «խավիարային դիվանագիտության» հետաքննությունը: Հատկանշական է, որ սկանդալը տեղի է ունեցել սեպտեմբերի 9-ի (1944թ. սեպտեմբերի 9-ի սոցիալիստական հեղափոխության 73-ամյակի) նախօրյակին: Հնարավոր է, որ սա հոբելյանի վերջին զանգվածային տոնակատարությունը լինի: Որովհետև, եթե ապացուցվի, որ բոլոր կասկածյալներն օգտվել են Ալիևների առատաձեռնությունից, որպեսզի գովազդեն նրա հանցավոր ռեժիմը, ապա քչերը կլինեն, որ եկող տարի կնշեն պատմական այդ օրը:

Ինչևէ, ավանդական ձախ կուսակցությունը հարկ է սպառված համարել: Հերթը տրոցկիստներինն է, ալտեր-գլոբալիստներինը, լիբերտարիանականներինը: Եվ անգամ 21-րդ դարի սոցիալիստներինը: Եվրապատգամավորները պահանջում են հետաքննել «Ադրբեջանական լվացքատան» գործը: Նրանք արդեն քվեարկել են դրա օգտին՝ 578 կողմ, 19 դեմ, 68 ձեռնպահ[6]: Սա նշանակում է, որ Եվրախորհրդարանում կան բավական թվով մարդիկ, ովքեր սատարում են Ափշերոնյան ընտանիքին: Արդեն հայտնի է, որ հունգարացի քաղաքական գործիչների շրջանում $7 մլն է բաժանել Ադրբեջանի փոխվարչապետի որդին՝ Օրհան Եյուբովը[7], իսկ այդ երկրի նախագահի անները՝ առաջին տիկնոջ հայր Արիֆ Փաշանը, 5 մլն է բաժանել նրանց չեխ գործընկերներին[8]: Տպավորում է այն փաստը, որ «խավիարային դիվանագիտության» օբյեկտների թվում որոշ գերմանացի, իտալացի և Արևմտյան Եվրոպայի այլ երկրների քաղաքական գործիչներից զատ՝ մեծ թիվ են կազմում Վարշավյան պայմանագրի նախկին երկրների ներկայացուցիչները: Այս առնչությամբ սոցիոլոգ Լիլիթ Ադիբեկյանը հատուկ հարցազրույց է տվել տողերիս հեղինակին: Նա

[6] «Вахан», 20.09.2017, Пловдив, с. 3.
[7] «Вахан», 13.09.2017, Пловдив, с. 1.
[8] «Вахан», 27.09.2017, Пловдив, с. 3.

նշել է, իր կարծիքով, պատճառը, թե ինչու են բուլղարացի քաղաքական գործիչները դառնում Ալիևների-Փաշաների կլանի հեշտ խայծը. «Բուլղարիան եղել և մնում է 16-րդ խորհրդային հանրապետությունը, ինչպիսին մենք այն գիտենք»[9]:

Հավելենք, որ դեսպան Նարգիզ Ակիֆ Գուրբանովան հեշտությամբ «գնում» է բուլղարացի լրագրողներին, հատկապես պոպուլյար լրատվամիջոցների գլխավոր խմբագիրներին: Օրինակ, բուլղարական հանրահայտ Нюз.бг տեղեկատվա-վերլուծական կայքի նոր գլխավոր խմբագիր (2016թ. նոյեմբերից) Ելենա Կոցևան թույլ չի տալիս Ալիևի ռեժիմն անվանել «հանցավոր», իսկ Ալիևին՝ «սատրապ»՝ որևէ պարզաբանում չընդունելով, որ «սատրապ» բառը իրանական է և ծագել է արդի Ադրբեջանի տարածքում: Նկատի ունենալով, որ Սոֆիայում Ադրբեջանի դեսպանատան և «Ուեբ մեդիա-գրուպ» հոլդինգի (որի մասն է Нюз.бг-ը) միջև հեռավորությունը 200 մետր է, ինչպես նաև դեսպան Գուրբանովայի՝ թանկարժեք ճաշկերույթներ կազմակերպելու և գլխավոր խմբագիրներին ոչ պակաս թանկարժեք նվերներ մատուցելու սովորությունը, դժվար չէ կռահել, թե ինչու գրեթե մեկ տարի այս կայքը իրենց անուններով չի նշում փաստերը, պետությունն ու անձանց: Իսկ եթե ինչ-որ բան հրապարակվում էլ է, ապա աղավաղված ձևով, առանց վերլուծության և վարկաբեկիչ փաստերի:

Արժե նշել նաև, որ Բուլղարիայի նախագահ Ռումեն Ռադևը հոկտեմբերին արդեն այցելել է Բաքու, իսկ Երևան այցելությունը հետաձգել է մինչև գալիք տարվա սկիզբ: Նախագահի այս մոտեցումը հաստատում է բուլղարացի շատ լրագրողների և քաղաքական գործիչների տեսակետը, թե «հենց Բաքուն է Սոֆիայի ռազմավարական գործընկերը»: Հավանաբար, գործում է հին հռոմեական «փողը հոտ չունի» ասացվածքը: Սակայն բացահայտված «ադրբեջանական լվացքատունը» և «խավիարային դիվանագիտությունն» անպայման վաղ թե ուշ կհանգեցնեն գործին ներգրավված եվրոպական գործիչների ձերբակալություններին: Այդ ժամանակ, բուլղարական «Բիվոլ» կայքի (որը մասնակցում է հետաքննությանը) գլխավոր խմբագիր Ասեն Յորդանովի կարծիքով, Իրինա Բոկովան և

[9] «Вахан», 13.09.2017, Пловдив, с. 10.

Կալին Միտրևը ստիպված կլինեն բացատրել, թե որտեղից են գտել այն միջոցները, որոնցով երկու առանձնատուն են գնել Նյու Յորքում, մեկը՝ Լոնդոնում և ևս մեկը՝ Փարիզում: Նա ուշադրություն է հրավիրում այն փաստի վրա, որ Իրինա Բոկովայի՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր քարտուղարի պաշտոնում գտնվելու ընթացքում մասշտաբային գովազդման է ենթարկվել Բաքվի ռեժիմը:

Ասեն Յորդանովը Բոկովային մեղադրում է այն հարցում, որ սա ողջ աշխարհում ՅՈՒՆԵՍԿՕ-ի դիվանագիտական ներկայացուցիչ է նշանակել տվել Ալիևային: Նա կարծում է, որ Եվրոպայում Ալիևների դրական իմիջը ստեղծվել է ոչ առանց «գնված» բուլղարացի ձախ քաղաքական գործիչների և լրագրողների աջակցության: Նրա այս կարծիքը հավաստվում է փաստաթղթերով և Բաքվից Սոֆիա (և ոչ միայն այնտեղ) կատարված բանկային փոխանցումներով:

Ա.Յորդանովի անկաշառ գործունեությանը լիովին հակադրվում է մեկ այլ լրագրողի՝ Լյուբոմիր Միխայլովի («Ստանդարտ» պարբերական) գործունեությունը, որը 2017թ. փետրվարի 20-ին Արցախում կայացած հանրաքվեի ժամանակ հրապարակել էր դեսպան Գուրբանովայի կոչը՝ ուղղված բուլղարացի քաղաքական գործիչներին. նա հորդորում էր նրանց չգնալ Արցախ որպես դիտորդ: Միխայլովը հետո հրաժարվում էր հրապարակել այնուամենայնիվ Արցախ մեկնածների (այդ թվում և տողերիս հեղինակի) տպավորություններն ու վերլուծությունները: Իսկ իմ հարցին, թե ինչու էր մեկնել «Քաղաքակրթությունների երկխոսություն» (Բաքու) համաժողովին, պատասխանել էր, որ ցանկացել է մեկ անգամ ևս զգալ ադրբեջանական ժողովրդի հյուրընկալությունն ու հանդուրժողականությունը... Իսկ հետո էլ հարց էր ուղղել հայերին, թե ինչու չեն կատարում միջազգային կազմակերպությունների (ՄԱԿ ԱԽ, ԵԱՀԿ, Եվրախորհրդարան և այլն) բոլոր բանաձևերն ու ինչու չեն պատրաստվում հեռանալ Արցախից...

ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐՈՒՄ ՊՐՈՖԻԼԱԿՏԻԿ-ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Արտյոմ Տեր-Հարությունյան[*]

Արդի ժամանակաշրջանում քաղաքական ծայրահեղականությունը և ահաբեկչությունը վերածվել են սահմանադրական կարգի և ազգային անվտանգության իրական սպառնալիքի: Ոչ վաղ անցյալի իրադարձություններն ակնառու ցուցադրեցին, թե որքան լուրջ կարող են լինել ծայրահեղական միջոցները և հանցավոր ահաբեկչական ոտնձգությունները սոցիալ-քաղաքական սուր հակասությունների լուծման գործում: Պետք է ընդգծել, որ այսօրվա իրականությունը, որը բնութագրվում է երկրում տեղի ունեցող տնտեսական և քաղաքական գործընթացների ծայրահեղ հակասականությամբ, բնակչության սոցիալական շերտավորմամբ և հասարակական կյանքի աստիճանական անկմամբ, կարող է ծնել վտանգավոր երևույթներ, որոնց բնույթը թաքնված է քաղաքական ծայրահեղականության մեջ: Այս հանգամանքները օրակարգային են դարձնում ծայրահեղական դրսևորումներին համարժեք հակազդելու անհրաժեշտությունը, ընդ որում, այդ համապետական խնդրի լուծման գործում որոշիչ դերակատարում պետք է ունենան ՀՀ հատուկ ծառայությունները և իրավապահ մարմինները:

Ցավոք, պետք է փաստել, որ պետության, հասարակական և ազգային անվտանգության պահպանությանը կոչված հիշյալ սուբյեկտներն այսօր ունակ չեն քաղաքական ծայրահեղականության դեմ գործուն և արդյունավետ պայքարի՝ իրենցից կախում չունեցող մի շարք պատճառներով, որոնցից հիմանականն այդ գործունեության հուսալի օրենսդրական ապահովման բացակայությունն է: Այս կապակցությամբ ցանկալի է կանգ առնել դատախազության, ազգային անվտանգության, ոստիկանության և այլ պե-

[*] Անվտանգության հարցերով փորձագետ:

տական կառույցների գործունեության այնպիսի կարևոր ուղղության իրավական կարգավորման խնդրի վրա, ինչպիսին է պրոֆիլակտիկ-կանխարգելիչ գործունեությունը քաղաքականապես մոտիվացված հակահիրավական գործողությունների կանխման ոլորտում: Այս գործողությունները հաճախ ուղղակիորեն ծնվում կամ կողմնակի հրահրվում են քաղաքական ծայրահեղականությունից:

Կանխարգելիչ գործունեության ոլորտում ստեղծված իրավիճակից դուրս գալու ելքը օրենսդրական անհապաղ կարգավորումն է, որն այսօր չի արվում: Պրոֆիլակտիկ-կանխարգելիչ աշխատանքը կանոնակարգվում է փակ օրենսդրական ակտերով, որի հետևանքով ազգային անվտանգության մարմինների աշխատակիցների լիազորությունները բացահայտ հակասության մեջ են մտնում այս ոլորտում օրինականության ապահովման պահանջների, ինչպես նաև քաղաքացիների իրավունքների ու ազատությունների պահպանման հետ:

Պրոֆիլակտիկ-կանխարգելիչ գործունեության կազմակերպման հստակ իրավական կողմնորոշիչների բացակայությունը հաճախ հանգեցնում է ձևականության, գերատեսչական իրավական ակտերի սուբյեկտիվ մեկնաբանության և քաղաքական նպատակահարմարությունն օրենքից վեր դասելու փորձերի: Այս ամենը հանգեցնում է հասարակական դժգոհության, չհասկացվածության և իրավապահ մարմինների ու հատուկ ծառայությունների պրոֆիլակտիկ-կանխարգելիչ գործունեության անհարկի քննադատության:

Քաղաքական ծայրահեղությունից ծնված հանցագործությունների կանխման ոլորտում ազգային անվտանգության մարմինների պրոֆիլակտիկ-կանխարգելիչ գործունեությունը սերտորեն առնչվում է մարդու քաղաքական և գաղափարական հայացքների հետ, որի վրա ազդեցությունն իրավական պետության մեջ անթույլատրելի է, ուստի հատկապես այս ոլորտի կանոնակարգումը պետք է լինի հնարավորինս մանրակրկիտ և տեղիք չտա ոչ միանշանակ կամ ընդլայնված մեկնաբանությունների: Ի դեպ, հակահիրավական հակասահմանադրական դրսևորումների կանխման գործում իրավապահ մարմինների և հատուկ ծառայությունների իրավասություններն ու լիազորություններն օրենսդրությամբ հստակ

սահմանելու անհրաժեշտությունը նշում են նաև ժողովրդավարական ավանդույթներ, հասարակության մեջ հարաբերական սոցիալական ու քաղաքական կայունություն և բնակչության իրավական գիտելիքների բարձր մակարդակ ունեցող երկրների իրավաբանները: Մասնավորապես, ԳԴՀ սահմանադրության պահպանման դաշնային գերատեսչության կարգավիճակի մշակողներից մեկը՝ Լ.Յախմանը, նշում է. «Գերատեսչության աշխատակիցներն իրենց խնդիրների հաջող կատարման համար պետք է սովորեն առօրյա աշխատանքում ճիշտ չափակցել «օրինականության» և «նպատակահարմարության» պահանջները, բացառիկ զգուշությամբ սահմանազատել սահմանադրության «կողմնակիցներ» և «հակառակորդներ» հասկացությունները… Միայն մեր կոնկրետ անելիքների և թույլատրելի օպերատիվ միջոցների հստակ իմացության դեպքում հնարավոր կլինի բռնել օրենքը խախտողների ձեռքը»:

Ենթադրվում է, որ ՀՀ իրավապահ մարմինների և հատուկ ծառայությունների պրոֆիլակտիկ-կանխարգելիչ գործունեության կանոնակարգումը պետք է իրականացվի երկու ճանապարհով: Առաջին՝ նրանց լիազորությունների և իրավասությունների ամրագրումը այն օրենքներում, որոնք կոչված են սահմանելու կառուցվածքը, նպատակները, խնդիրները, յուրաքանչյուր գերատեսչության գործունեության կարգը («Դատախազության մասին օրենք», «ԱԱ մարմինների մասին օրենք», «Ոստիկանության մասին օրենք» և այլն): Սակայն այս տարբերակը հենց սկզբից պարունակում է որոշակի թերություններ, մասնավորապես թույլատրում է նպատակների, պրոֆիլակտիկ-կանխարգելիչ գործունեության մեթոդների ու բովանդակության յուրահատուկ, «գերատեսչական» մեկնաբանություններ, որոնք էլ, իրենց հերթին, կարող են բարդացնել երկրում հանցավորության կանխարգելման բոլոր մասնակիցների ամբողջական սուբյեկտի սերտ փոխգործակցությունը: Այս կապակցությամբ նախընտրելի է այլ ուղի, այն է՝ «Հանցագործությունների պրոֆիլակտիկայի մասին» նորմատիվային իրավական ակտի մշակում և ընդունում: Այս ակտը պետք է հռչակի հանցավորության դեմ պայքարի պետական քաղաքականությանը ենթակա՝ հանցագործությունների վաղ կանխարգելման միասնական հայեցակարգը և այդ գործունեության կազմակերպման

հիմնական սկզբունքները: Ակտում պետք է նշվի իրենց լիազորությունների շրջանակներում հանցագործությունների պրոֆիլակտիկա իրականացնող բոլոր գերատեսչությունների սպառիչ ցանկը, վավերացվեն նրանց կողմից այս ոլորտում կիրառվող հրապարակային և գաղտնի աշխատանքի ձևերը և մեթոդները: Այստեղ պետք է արտացոլվեն ինչպես պրոֆիլակտիկ-կանխարգելիչ գործունեության սուբյեկտների, այնպես էլ այն քաղաքացիների, կազմակերպությունների, գերատեսչությունների ղեկավարների, հասարակական կազմակերպությունների իրավունքներն ու պարտականությունները, որոնք այս կամ այն կերպ ներգրավված են հանցագործությունների պրոֆիլակտիկայի գործընթացում: Ակտը պետք է լինի համառոտ, յուրաքանչյուր քաղաքացուն հասանելի և ուղղորդված ոչ թե ոստիկանական հանգամանքների, այլ հանցագործությունների վաղ կանխման արդյունավետ համակարգի կազմակերպման հեռանկարին: Ակտի պահանջների իրականացման առանձնահատկությունը յուրաքանչյուր իրավապահ մարմնում և հատուկ ծառայություններում պետք է հանգամանորեն մշակվի գերատեսչական իրավական ակտերում:

Ենթադրվում է, որ «Հանցագործությունների պրոֆիլակտիկայի մասին» իրավական ակտի ընդունումը կնպաստի ՀՀ իրավապահ մարմիններում և հատուկ ծառայություններում հանցագործությունների վաղ կանխման ինստիտուտի զարգացմանը, կօգնի բոլոր պետական և հասարակական կառույցներին գտնել իրենց տեղը հանցավորության դեմ պայքարի համապետական կարևորության խնդրում:

«Հանցագործությունների պրոֆիլակտիկայի մասին» իրավական ակտի հայեցակարգ

Ակնհայտ է, որ Ակտի ներածական մասում պետք է բացատրվեն նրա նպատակը և նշանակությունը, մասնավորապես ՀՀ իրավապահ մարմինների և հատուկ ծառայությունների պրոֆիլակտիկ-կանխարգելիչ գործունեության կանոնակարգումը, որն ուղղված է երկրում հանցավորության կանխմանը, քաղաքացիների իրավունքների և ազատությունների պաշտպանությանը, օրինականության և իրավակարգի ամրապնդմանը:

«Ընդհանուր դրույթներ» հոդվածում (բաժին, մաս) պետք է տրվի պրոֆիլակտիկ գործունեության սահմանումը, որի տակ պետք է հասկանալ այն անձանց կողմից հանցագործությունների կանխումը, որոնց հակապետական գործողություններն ունեն հակահիրավականի վերաճելու հակվածություն, վնաս են հասցնում պետությանը, հասարակությանը, այլ քաղաքացիների իրավունքներին, ազատություններին, առողջությանը, արժանապատվությանը, գույքին, ինչպես նաև գործողությունների տեղայնացումն ու չեզոքացումը, հանցագործությունների կատարմանը նպաստող պատճառների ու նախապայմանների վերացումը: Նույն հոդվածը պետք է հռչակի, որ պրոֆիլակտիկ գործունեությունը չի կարող ենթարկվել քաղաքական կուսակցությունների կամ հասարակական կազմակերպությունների որոշումներին, օգտագործվի որպես քաղաքական պայքարի միջոց կամ ընդդիմությանը ճնշելու նպատակով: Իրավապահ մարմինները և հատուկ ծառայությունները հանցագործությունների պրոֆիլակտիկայի իրենց գործունեության մեջ պետք է առաջնորդվեն իրավական չափանիշներով և հետևյալ սկզբունքներով՝ մարդասիրություն, անկախ սոցիալական վիճակից, ազգությունից, հավատքից և քաղաքական հայացքներից Ակտի առջև քաղաքացիների հավասարություն, քաղաքացիների իրավունքների և պարտականությունների միասնություն, պետության, հասարակության և քաղաքացու շահերի զուգակցում:

«Պրոֆիլակտիկ գործունության սուբյեկտներ» հոդվածում պետք է տրվի պրոֆիլակտիկ գործունեություն իրականացնելուն կոչված պետական գերատեսչությունների ցանկը (դատախազություն, դատարան, ԱԱԾ, ոստիկանություն, արդարադատության նախարարություն և հետաքննչական մարմնի իրավունք ունեցող այլ կառույցներ), որոնք կազմակերպում են այն իրենց իրավասությունների շրջանակներում, այդ ոլորտում սերտորեն համագործակցում են միմյանց և գործադիր իշխանության մարմինների, հասարակայնության, զանգվածային լրատվամիջոցների հետ: Նույն հոդվածում պետք է նշվի, որ թվարկված գերատեսչությունների կողմից պրոֆիլակտիկ գործունեությունն իրականացվում է սահմանադրությանը, նշված մարմինների գործունեությունը կանոնա-

կարգող օրենքներին, ինչպես նաև գերատեսչական ակտերին համապատասխան գաղտնի և բացահայտ միջոցների կիրառմամբ:

Ակտում անհրաժեշտ է սահմանել, որ պրոֆիլակտիկ գործունեության սուբյեկտները այն իրականացնելու ընթացքում պարտավոր են՝

- կիրառել իրենց վարույթում հետաքննվող հանցագործությունների կանխման սպառիչ միջոցներ,
- բացահայտել հանցագործությունների կատարմանը նպաստող կամ ուղղակիորեն վերարտադրող գործոնները, միջոցներ ձեռնարկել իրավասության շրջանակներում դրանց տեղայնացման և չեզոքացման ուղղությամբ,
- այն դեպքերում, երբ հանցագործությունների կատարմանը նպաստող բացահայտված պատճառների ու նախապայմանների վրա ազդելը վեր է պրոֆիլակտիկ գործունեության սուբյեկտի իրավասություններից, ժամանակին տեղեկացնել համապատասխան մարմիններին, հասարակական կառույցներին և պաշտոնատար անձանց համապատասխան միջոցներ ձեռնարկելու նպատակով,
- անհրաժեշտ բացատրություն (գրավոր կամ բանավոր) տալ այն քաղաքացիներին, որոնք կարծում են, որ պրոֆիլակտիկ միջոցառման ընթացքում ոտնահարվել են իրենց շահերը, սահմանադրական իրավունքներն ու ազատությունները,
- պահանջի դեպքում պրոֆիլակտիկ միջոցառումների կիրառման համար հիմք հանդիսացող բոլոր նյութերը տրամադրել այն անձանց, ովքեր օրենքի համաձայն ունեն դրանց հետ ծանոթանալու լիազորություններ:

Ակտը պետք է պարունակի նաև պրոֆիլակտիկ գործունեության սուբյեկտների իրավունքների ցանկը.

- գործող օրենսդրությանը համաձայն օգտագործել բացահայտ և գաղտնի համալիր միջոցները հանցագործությունների կանխման, բացահայտման, տեղայնացման, չեզոքացման և դրանց կատարմանը նպաստող պատճառների և պայմանների վերացման, ինչպես նաև իրավակարգի, քաղաքացիների իրավունքների, շահերի, ար-

ժանապատվության, առողջության և գույքի պաշտպանության նպատակով,

- վերահսկել պետական և հասարակական կառույցների, պաշտոնատար անձանց կողմից իրենց իրավասությունների շրջանակներում պրոֆիլակտիկ գործունեության սուբյեկտից ստացած՝ հանցագործությունների կատարմանը նպաստող բացահայտված պատճառների և պայմանների վերաբերյալ տեղեկատվության իրացման ընթացքում կիրառվող միջոցները, դրանց տեղայնացման, չեզոքացման և վերացման նպատակով,
- հրավիրել մասնավոր և պաշտոնատար անձանց, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին, որոնց գործողությունները կրում են սոցիալապես վտանգավոր բնույթ կամ խրախուսում են այլ անձանց՝ իրականացնելու հակաիրավական, քրեորեն պատժելի գործողություններ, ինչպես նաև նրանցից պահանջել բացատրություն քրեածին վարքի վերաբերյալ:

Պրոֆիլակտիկ արձագանքման համար հիմք պետք է հանդիսանա հանցագործությունների կատարմանը նպաստող ի հայտ բերված պատճառների և պայմանների կամ կոնկրետ անձի (խմբի) սոցիալապես վնասակար բնույթ կրող գործողությունների վերաբերյալ փաստացի տվյալների ստացումը: Այսպիսի տվյալները պրոֆիլակտիկ գործունեության սուբյեկտի կողմից կարող են ստացվել իրավապահ մարմինների կամ հատուկ ծառայությունների ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում, զանգվածային լրատվամիջոցներից, պաշտոնատար անձանց կամ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հրապարակային ելույթներից, այլ բաց աղբյուրներից, նախաքննության կամ դատաքննության նյութերից: Պետք է ստուգվեն փաստացի տվյալների օբյեկտիվությունն ու արժանահավատությունը, անհրաժեշտության դեպքում միջոցներ ձեռնարկվեն լրացուցիչ ստուգման, ճշտման և լրացման ուղղությամբ:

Ակտի առանձին հոդված պետք է նվիրվի իրավապահ մարմինների և հատուկ ծառայությունների կողմից իրականացվող պրոֆիլակտիկ

գործունեության ընթացքում քաղաքացիների իրավունքներին և պարտականություններին: Պետական և հասարակական կառույցների ներկայացուցիչները, կազմակերպությունների ղեկավարները, առանձին քաղաքացիներ պարտավոր են աջակցել պրոֆիլակտիկ գործունեության սուբյեկտներին հանցագործությունների կանխման, տեղայնացման, չեզոքացման և դրանց նպաստող պատճառների վերացման գործում: Պաշտոնատար անձինք, քաղաքական կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների ղեկավարները, որոնց պրոֆիլակտիկ գործունեության սուբյեկտի կողմից հասցեագրվում է տեղեկատվություն հանցագործությունների կատարմանը նպաստող՝ ի հայտ բերված պատճառների և պայմանների վերաբերյալ, պարտավոր են իրենց իրավասությունների շրջանակներում համապատասխան միջոցներ ձեռնարկել քրեածին գործոնների վերացման ուղղությամբ: Դրանց չկատարման և անցանկալի հետևանքների հանդես գալու դեպքում հանցավոր անգործություն ցուցաբերած անձինք կարող են օրենքի համաձայն պատասխանատվության ենթարկվել:

Այն քաղաքացիները, որոնց սոցիալապես վնասակար գործողությունների մեջ նկատվում է հանցագործության վերաճելու միտում, պարտավոր են անհրաժեշտության դեպքում իրավապահ մարմինների կամ հատուկ ծառայությունների կանչով ներկայանալ և գրավոր կամ բանավոր բացատրություն տալ իրենց գործողությունների վերաբերյալ:

Քաղաքացիները, որոնց նկատմամբ կիրառվել են պրոֆիլակտիկ ազդեցության միջոցներ, պետք է իրավունք ստանան՝

- օրենքի շրջանակներում վերին, ինչպես նաև ցանկացած այլ ատյաններում բողոքարկել իրավապահ մարմինների կամ հատուկ ծառայութունների գործողությունները,
- հրաժարվել իրենց գործողությունների վերաբերյալ ցանկացած բացատրություն տալուց,
- իրենց գործողությունների վերաբերյալ բացատրություն տալ մայրենի լեզվով, օգտվել թարգմանչի, ինչպես նաև քաղաքացիական և սահմանադրական իրավունքների պաշտպանի ծառայություններից:

Հուշագիր հեղինակին

«Գլոբուս» վերլուծական հանդեսը հրապարակում է վերլուծական բնույթի հոդվածներ՝ նվիրված Հայաստանի և Հայության ռազմաքաղաքական, տեղեկատվական և վերջինիս մեջ ընդգրկված քաղաքակրթական ու հոգևոր անվտանգության խնդիրներին, հայկական համայնքների և տարալեզու-տարադավան հայերի կազմակերպչական անվտանգության հիմնահարցերին:

«Գլոբուս» ամսագրի խմբագրական խորհրդի կողմից *պատվիրված* նյութերը հանդիսանում են «Նորավանք» ԳԿՀ-ի սեփականությունը: Ձեռագրերը գրախոսվում են: «Գլոբուս» հանդեսի հրապարակումները արտահայտում են հեղինակների տեսակետները:

Հոդվածների ներկայացման ձևը

1. Հոդվածները ներկայացվում են տպագիր և համակարգչային շարվածքով (*MS WORD* ծրագրով), «*Sylfaen»* տառատեսակով, 11 տառաչափով (ֆոնտով), ծավալը չպետք է գերազանցի 7 էջը:
2. Առաջին անգամ հոդված ներկայացնելիս պարտադիր կցել հեղինակի ինքնակենսագրությունը *(CV)*:
3. Էջը պետք է համապատասխանի A4 չափին, լուսանցքները ձախից, աջից, վերևից ու ներքևից՝ 2 սմ: Տողերի միջև հեռավորությունը՝ 1.5:
4. Ինտերնետային աղբյուրների հղումները նշել տողատակում:

Խմբագրություն

«ԳԼՈԲՈՒՍ» ամսագիր
Խմբագրական խորհուրդ

Հիմնադիր՝ «ՆՈՐԱՎԱՆՔ» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ Արդարադատության նախարարության
Պետական ռեգիստրի վկայական թիվ 221 տրված 17.05.2001թ.
Հասցե՝ ՀՀ, 0026, Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ globus@noravank.am, office@noravank.am
Հեռախոս՝ + (374 10) 44 38 46
Ֆաքս + (374 10) 44 04 73

Համարի պատասխանատու՝ Լուսինե Բաղրամյան

Հանձնված է տպարան 24.11.2017թ.
Թիվ 9 (88), 2017թ.
Տպաքանակը՝ 150։

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70x100 1/16
Պայմանական 4 մամուլ։ Տառատեսակը՝ Sylfaen
Տպագրվել է «Հայկարլի» ՍՊԸ տպարանում